ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

1874

ՑՈՒՆԻՍ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Պ. ՅԻՒԼՍԻՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ, ՀԱՅ ԳՐԵՆԱՒՈՐԵՆԱՆ ՎԵՐԱՑ
ԿՈՐՆՈՅ ԱԶԳԱՑԵՒ ՎԵՐԱԾՈՒՆԸ
ՄԵԾ ԿՈՏԵՒՈՒ ՍԱՐԿԱՒԱՊԵՏԸ—ՎԱՐԴԱՊԵՏԸ,
ՅՈՒԱՆԷՍԻԱՆՑԻ ԴՊՐՈՑԸ,
Ս. ՄԽԻՐԱՐԵԱՆ ՎԵՐԱԾԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՀԱՆԴԷՍԸ,
ԸՆԿԵՐԱՑԻՆ
ՔԱՂԱՔԱՑԻՆ
ԵՒ ՄԱՍՈՒՐԻ ՄԷՋ ԵՐԵԱՆԵԼԸ

ՀԱՄԻԷՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԻՏԷՆԻՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

Դ. ՏԱՐԻ 1874 ՅՈՒՆԻՍ

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՆԵՏԻԿ ՄԽԻԹԱՐԵԱՆԴ

«Ի՞նչպէս կ՚կարենամ այն կղզին մուտ կարմիր շէնքերով ու դեղեցիկ նոճիներով, որք այնպէս որոշ կ՚բարձրանան միջօրէի լուսին. ինչ հոյակապ, բայց և քնքուշ տեսարան։»

— Արևելաղէտ մարդ էք և դեռ այցելութիւն չէք արած Ս. Ղազարու, պատասխանեցի ես պատահմամբ իմ հետ զանուող դիմնակալին, որ Վենետիկեն Լիտո գնացող շոգենաւի վրայ իմ քովս կանգնած՝ վերոյիշեալ հարցն ուղղած էր ինձ զուխյերական բարբառով։ Մէկմէ

դրէք ձեր չուն 'ի Լիսօ և սորա փոխարէն եկէք իմ հետ այն կղզին, որ այսօրուայ Ճամբուս նպատակն է։ Այն տեղ ոչ թէ միայն հարուստ բովանդակութեան շինուածներու և սիրուն պարտէզներու վրայ աչքերնիդ յառեցընելու առիթ կ'ունենաք, այլև ռևազդեստ վարդապետներ կ'տեսնէք, որք ահա իսկոյն աշակերտներու հետ վանքին պատկանեալ նաւակով մեր քովէն անցան և իւրեանց տարօրինակ հնչմամբ ասես թէ ձեր մտադրութիւնը դրդեցին։

Առաջարկութիւնս ընդունուեցաւ, և հաղիւ թէ մեր շրջենաւն թողել էր իւր փոքրաթիւ ուղևորներն Լիսօի մէջ, և ահա շարունակեցինք մեր չուն ծովաշրջի վրայով։ Այս առաջին անգամ չէր Ս. Ղազար գնալս, որ լեզուագիտական պարապմունքներուս առթիւ առանձին իմն նշանակութիւն ու գին ունէր ինձ համար. և ես գիտէի որ միշտ կարելի էր վանք երթալու հնար գտնել։ Թէև Գղէլ Ֆելլի ամենայն մասամբ պատուական ուղեցոյցի մէջ միայն մանր տառերով յիշուած է այս կղզին և խորհրդաւոր աստղանիշներ չունի՝ բազմաթիւ Ճամբորդներու ուշադրութիւնը յատկապէս իւր վրայ բևեռելու համար, սակայն և այնպէս ստէպ այն տեղ ժամանող անկլիացի և ամերիկացի հիւրերու պատճառով վանքի Ճամբան կարող չէր անցայտ մնալ Վենետկի շահասէր թիւավարներուն։ Աւասիկ մեր թիւավարներէն մին՝ նաւակի առաղաստը պարզած անդունդի վրայէն քաջ սահելով բոսպէն տարաւ զմեզ 'ի կղզի, ուր գրեթէ նոյն պահուն անկլիական ընտանիք մի ևս միացաւ մեզ վանքի դրան առջև։ Սորա մնան անկլիերէնի հմուտ աբեղայի մ'առաջնորդութեան տակ, իսկ մենք — երբոր դունապանն իմացաւ որ դերմանացի էինք — մի այլ վարդապետ ստացանք իբրև ուղեցոյց, որ բառականին ազատ ֆրանսերէն կ'կոտրատէր, թէև սաստիկ իտալական արտասանութեամբ։

Ընկերս գնաց սորա հետ տեսնելու հայերէն ու փայի ձեռագրներով, անդրիներով ու մուվիաներով հարուստ մատենադարանը, պարտիզի սաղարթաւոր Ճեմելիքը, Նօվէլլիի «Տէրունական ընթրեաց» զարդարուած շքեղ սեղանատունը, տաղարանը, դօթական ոճի եկեղեցին, ուր կ'հանգչի վանքի հիմնադիրն Մխիթար, և վերջապէս խոհանոցի արձակ սրահները, որք Մխիթարեաններու բոլոր հաստատութեանց նման արդի պերճութեամբ շատ աչքի կ'զարնեն։ Իսկ ես այս տեսութեան արժանի բաներն արդէն Ճանաչելով՝ իսկոյն մտայ թանգարան, ուր կարելի է տեսնել ու դնել ըստ մեծի մասին հայերէն և նոյն իսկ գիտական աբեղաներէ յօրինեալ գրքերը։

Վանական աշխատասիրութեան պանծալի՛ արդասիք։ Այս վարդապետներն հեռաւոր հայրենեաց գրականական գործունէութեան միջավայր շինած են իւրեանց վանքը և նոր ժամանակիս ամենասուր զէնքերէն մին յաջողութեամբ բանեցընելով՝ հայոց գրականութեան մէջ նոյն պաշտօնը կ'վարեն, զոր կ'վարէին առ մեզ հոգևորականք միջին դարերուն, երբ իւր բնական դաշնակցէ՝ այսինքն տպարանէ թափուր մատենագրութիւնը միանգամայն նոցա ձեռքը կ'զտնուէր, զի նոքա միայն գիտէին կարդալ և գրել։ Սակայն 'ի պատիւ Մխիթարեանց պէտք է ասել որ նոքա իւրեանց մամլէն դուրս ելնող գրքերու մէջ նոր դարուս յառաջադիմութեան թշմամի չեն հանդիսանար բնաւ։ Այս գրքերու մեծագոյն մասն աստուածաբանական և խրատական լինելով՝ մասամբ իւիք որոշուած է միսսիոնարներու գործածութեան համար, որոց կրթութիւնն իւրեանց գլխաւոր նպատակներէն մին կ'համարին. այս տեսակ գրքերէն մին է՝ օրինակի համար՝ Ներսէս Կլայեցւոյ երեսուներեք լեզուներով թարգմանեալ աղօթագիրքը, զոր նոքա սիրով ցոյց կը տան օտարներու։ Աշխարհական մատենագրութիւնն ևս վանքի հաստատուելէն 'ի վեր փութով կ'մշակուի գիտնական գրաղմանց հետամուտ երիտասէր Մխիթարեանցմէ, որում ապացոյց կարող է համարուիլ արդէն 1836ին Կ. Նոյման արևելագիտի ձեռքով հրատարակեալ գրացուցակն «Հայոց գրականութեան պատմութեան» մէջ, որ այժմ բազում յաւելուածներու կարօտ է հարկաւ։ Այս ցուցակէն պարզ կ'երևի Մխիթարեան հայ գիտնականներու ակնիւ ջանքը, որով կ'նկրտին 'ի ձեռն թարգմանութեան ու մշակութեան նախ սեփականել և ապա թէ հաղորդել ազգայնոց օտար գրականութեանց նշանաւոր գործերը։ Սակայն նոցա մատդրութիւնն առաւել իմն ուղղուած է բուն ազգային գրականութեան վերակենդանութեան վրայ. բայց այս նպատակին դիմելիս նոքա՝ տարօրինակ գրութեան մէջ կ'տեսնենք զինքեանք, զի հայոց լեզուի աշխարհաբար կոչուած կենդանի ձևը հինգ ու վեցերորդ դարու դասական հեղինակներու լեզուէն ոչ սակաւ, այլև դարձեալ ոչ յոյժ իմն կ'տարբերի որ կարող լինէր ռամկայինէն (patois) զատ բան մի համարուիլ, և զի սա չկրնար իտալերէնի, ֆրանսերէնի և կամ լատիներէնէ ծաղեալ միւս լեզուներու պէս 'ի գրականական լեզու վերածուիլ, այլ նոր յունարէնին հաւասար կ'դայ, ուստի և Մխիթարեանք՝ Քսենոֆոնի ոճին հետևող արդի կրթեալ Յոյներու օրինակին համեմատ՝ Հայոց հին պատմագիրներու լեզուով գրելու և սորա դիւաութիւնն ազգայնոց մէջ ծաւալելու կ'աշխատին բազում ճգամբ։ Այս

երկու ուղղութեամբ ևս նոքա այժմէն իսկ գովանի արդիւնքեր յառաջ բերած են, որով Հայերու մէջ չէ թէ միայն 'ի մասին լեզուի մաքրութեան ու վայելչութեան ամենաբարձր դատարանի վարկ ու պատիւ յաջողած են տալ իւրեանց Ճեմարանին, այլ Հայոց հին աստուածաբաններու, պատմաբաններու և աշխարհագիրներու ուսումնասիրութեան համար ևս հիմք պատրաստած են՝ զանոնք նոր 'ի նորոյ հրատարակելով և ամենքին մատչելի շինելով։ Նոցա մեծ ծառայութիւնքն 'ի նպաստ վերակենդանութեան հին Հայոց տարրի այն ժամանակ միայն կարելի կ'լինի լիովին գնահատել, երբոր զօրեղ պատմական ունակութեամբ օժտեալ այս ազգի փառաւոր անցեալն մտաբերենք, զորմէ կը վկայեն մեզ նորա պատմաբանք։ Զի թէև Հայոց պետութիւնը, զոր իբր թէ նոցա տոհմապետն Հայկ — Հայերու պատմական ձիրքին պատիւ չբերեր անշուշտ, որ նոքա դեռ մինչև այժմ իբրև պատմական անձն կ'համարին գնա — և Հայկի յաջորդներն հիմնած են, առասպելական անցեալ մթութեան մէջ կ'ընկնի և նոցա հին պատմութեան ստուգիւ յայտնի շրջանը յարատև ասպատակութեանց և օտար տիրապետութեանց հանդէս մը կ'ներկայացնէ, յորմէ երկիրն մերթ Ասորոց կ'ենթարկուէր, մերթ Պարսից, մերթ Յունաց Սելևկեան տոհմին և մերթ Պարթևաց Արշակունեան զարմին, այնու ամենայնիւ Հայաստան ևս իւր դիւցազնական ժամանակն ունեցած է։ Պարթև Արշակունեաց շառաւիղէ սերեալ օտար, բայց ազգային ոգի շնչող տոհմի տիրապետութեան ներքև Հայաստան հսկայական քաջութեամբ ամբողջ դարեր տևող յեղաշրջիկ պատերազմներ կ'վարէ յԱրևմուտս՝ հռոմէական կայսրերու, յԱրևելս՝ անմիջապէս հարևան և ոչ նուազ ինն հուժկու Սասանեան պետութեան դէմ, սակայն այս կռիւները չարաբաստիկ ելք կ'ունենան։ Պարսից պատերազմի վերջին շրջանի վրայ ընդարձակ տեղեկութիւններ կ'թողնեն մեզ Հայոց պատմութեան նախահայրն Մովսէս Խորենացի և Եղիշէ՝ երկուքն ևս հինգերորդ դարու պատկանող և Եւրոպայի մէջ տակաւին ոչ ըստ արժանւոյն յայտնի մատենագիրք։ Նոյն շրջանին կ'վերաբերի և քրիստոնէութեան հիմնումն յամբողջ Հայաստան։ Կրօնական եռանդն 'ի յամառ մարտ կ'ոգևորէ զՀայերն վասն պաշտպանութեան նոր հաւատոյ ընդդէմ Սասանեան կուսապաշտութեան և իսլամի և աշխոյժ դրականական գործունէութեան զարկ կ'տայ Հայերուն։ Քրիստոնէական հինգերորդ դարէն սկիզբ կ'առնէ նոցա մատենագրութեան ամենաբողբոջ ժամանակը, որ ընդհատմամբ մինչև ԺԲ. դարը տևելով՝ այնքան հոգևորական և աշ-

խարհական և յատկապէս պատմական գրուածներ յառաջ կ'բերէ, որ նոցա գերմաներէն պատմութիւնը, կ'ուզեմ ասել Նոյմանի վերոյիշեալ գիրքը, թէև սա այն գործերու միայն համառօտ բովանդակութիւնն ու անուններն յիշելով կ'շատանայ, այնու ամենայնիւ ստուար հատոր մի կ'կազմէ։ Միջին դարերուն մատենագրութեան մշակութիւնը կ'հաշ- մի Հայերու մէջ, նոցա կրօնական կեանքն ևս կ'նուազի օր ըստ օրէ սասսկացող եկեղեցական վէճերու աղաղաւ. բայց անցեալ դարու սկզբին Մխիթար յանկարծ վերջ կ'տայ այս սպառնալի թմրութեան։ — Արդ՝ կ'ուզեմ համառօտիւ գծագրել այս ականաւոր մարդու կենսագրութիւնն և նորա ուխտի պատմութիւնը, հետևելով 'ի սմին Հայ գրչէ ծագած տեղեկագրի մը, որ այլև այլ լեզուներով տպուած է 'ի Ս. Ղազար։

*
* *

Մխիթար մին է այն մեսիական բնաւորութիւններէն, որք արդէն վաղուց վերահասու կ'լինին իւրեանց կոչման և առօրեայ պաշտօնի անձուկ պատուարները ճեղքելով՝ իւրեանց ազգի հոգևոր կամ հոգևորական առաջնորդ հանդիսանալու վսեմ նպատակին կ'թևակոխեն։ Ծնած էր սա յամին 1676 փոքր Հայաստանի քաղաքներէն մինի մէջ՝ 'ի Սեբաստիա, և արդէն մանկութեան հասակին լուրջ ու դերազանց միտք ցոյց կ'տար. մանկային զբօսանքներէ կ'խորշէր և ծնողաց յորդորներուն հակառակ՝ դիտական հրահանգներով և հոգևորական վարժմունքներով զինքը թափառիկ քարոզչի գժուար պաշտօնի համար կ'մարզէր։ Բսանամեայ հասակին քահանայ կ'ձեռնադրուի և նոյն ժամայն կ'սկսի իւր վտարանդի ու տարուբեր կեանքը. այնուհետև կ'տեսնենք զնա զանազան քաղաքներու մէջ՝ մերթ 'ի Հայրենիս և մերթ 'ի Տաճկաստան՝ միշտ զբաղեալ քարոզմամբ, վարժապետութեամբ և հեղինակութեամբ։ Սեբաստիայի զարհուրելի ժանտախտի ժամանակ հաւատարիմ կ'մնայ իւր պարտքին և կ'յափշտակէ քաղաքայ սիրտն այն անվեհեր քաջութեամբ, որով օր ու գիշեր հոգեկան ու նիւթական սփոփանք կ'բաշխէր հիւանդներու։ Թերայի մէջ առաջին անգամ կ'տպէ իւր աղօթագիրքն ու դասագրքերը։ Բայց չար ժանտախտէն աւելի գժուար կ'լինի նորան մարտնչիլ եկեղեցական գժտութեանց, այսինքն Հայ ազգի ժառանգական ցաւի դէմ։* Խուսափելով քինայոյզ թշնամիներէ,

*Գերմանացի հեղինակին յայտնի՞ է արդեօք, որ այժմ նոյն իսկ Մխիթարեանք են սոյն ցաւին առատ մնոնդ տուողները։ Ծ. Թարգմ.

որք կ'նեղէին զնա 'ի Բերա՝ ազգայնոց հռոմէադաւան փաբրագոյն դա-
տին պատկանելոյն համար, նա կ'դիմէ 'ի Մօրէա՝ նոյն ատեն Վենետ-
կի հասարակապետութեան հպատակ երկիրը։ Անդ կ'հիմնէ մի նոր
ուխտ, մի եկեղեցի և մի վանք. Կլեմէնս ԺԱ. պապը կ'հաստատէ
վանքի կանոնագիրը, որ յօրինուած էր Բենեդիքթեան կարգի սահմա-
նադրութեան համեմատ, և Մխիթար կ'դառնայ առաջին աբբայ։
Սակայն այս միջոցին Տաճիկները Մօրէա կ'յարձակուին և մենաստանի
մէջ ատար հարկանելով շրջս վարդապետ գերի կ'տանին. Մխիթար ևս
նոյն վիճակին կ'ենթարկուէր անշուշտ, եթէ վտանգը զուշակելով սա-
կաւ մի առաջ տատնեմեկ միաբանները հետ Վենետիկ նաւած չլինէր
1715 թուականին։

Այս տեղ նա կ'ապաւինի հասարակապետութեան աւագանոյն, որ
ղկնի երկամայ բանադնայութեանց քաղաքէն կէս ժամ հեռու
գտնուող Ս. Ղազարու կղզին կ'որոշէ նորան 'ի բնակութիւն, ուր այն
ժամանակ միայն մի քանի հատ թշուառ ձկնորսական հիւղեր կ'տես-
նուէին և մի քայքայեալ եկեղեցի։ Հին ժամանակներն այն տեղ քաղա-
քային հաշուով հիմնեալ դարմանոց մը կար բորոտներու համար, այլ
այս համաստիւռ ժանտի անհետանալէն ետև դարմանոցն արդէն իս-
պառ աւերակ դարձած էր։ Մխիթարի և նորա յաջորդներու ձեռքի
տակ ամայի կղզին վայելուչ վանական շէնքերով և պարտէզներով կը
զարդարուի. նա կ'նորոգէ եկեղեցին ըստ զօթական ոճի և կ'յարդարէ
զայն ըստ պիտոյից Հայ պաշտամանն, որ յունարէնին շատ նման է։
Սակայն ընկերներու հետ այս դիւր ու հանգիստ ապաստանը յօրինե-
լիս՝ Մխիթար չմոռնար իւր աւելի վսեմ նպատակները, այլ իւր ամ-
բողջ ազգի կեանքը վերանորոգելու ուխտած լինելով միշտ դուն կը
գործէ հանիլ այն վախճանին վանքի մէջ արագ բազմացող նորամուտ-
ներու կրթութեամբ և աշակերտներու հետ շարադրած մատեաններ-
ով, որք նորա տպարանի մէջ իսկ լոյս տեսնելէն յետոյ իսկոյն ճամ-
բայ կ'բանան ամենուրեք, ուր որ կային ընդ սփիւռս տպրող Հայոց ազ-
գի զաւակունք։

Տակաւին Մխիթարի կենդանութեան ժամանակ նորա վանքը Հայ
ազգի մտաւորական կեդրոնը կ'դառնայ, և երբոր նա 1749ին իւր
բազմաջան օրերն կ'աւարտէ, 'ի պատիւ նորա Մխիթարեան կոչուած
միաբանութեան մէջ չեն նուազիր այնպիսի աշակերտք և յաջորդք, որք
իւրեանց Ռաբանոյ շաւիղն ընթանալով իբրև վարժապետք և մատե-
նագիրք գործունեայ կ'հանդիսանան թէ 'ի Ս. Ղազար և թէ վերջերն

'ի Վիէննա բացուած վանքի մէջ։ Վարժապետութեան համար Մխիթարեանց առջև տելի լայն ասպարէզ կ'բացուի այս դարուս սկիզբին, երբոր Մասրասի երկու հարուստ Հայերու Ճոխ նուիրատուութեամբ երկու նոր Մխիթարեան դպրոցներ կ'բացուին 'ի Վենետիկ ու Փարիզ։ Այս դպրոցներու ըստ մեծի մասին նշանաւոր ընտանեաց պատկանող աշակերտներն արդէն շատ անդամ կարևոր պաշտօններու հասած են Տաճկաստանի ու Պարսկաստանի մէջ իբրև դիւանագէտք, դրամատէրք և զինուորականք։ Ի մեծարանս Մխիթարեաններու յաջողակ գործունէութեան՝ Հռոմէական աթոռն 1804ին յաստիճան արքեպիսկոպոսութեան կ'վերածէ վիճակավարիչ աբբայն և նորայաջորդները։ Սակաւ մի յետոյ, երբ Նափոլէոն առաջնոյ հրամանով բոլոր իտալական վանքերու վրայ փականք կ'դրուի՝ միաբանութիւնը կ'յաջողի զերծանիլ այս վտանգէն Ճեմարանի տիտղոս կրելու իրաւունք ժառանգելով, որում նա արդարև լիովին արժանի եղած էր բաղմադիմի գիտնական վաստակոց շնորհիւ։ Այն օրէն սկսեալ Մխիթարեան միաբանք որպէս անդամք սկադեմիայի կ'նկրտին նմանող լինիլ սոյն տեսակ ուսումնական ընկերութեանց՝ առանձին բանասիրական լրագիր մի հրատարակելով և պատուոյ վկայագիրք բաժանելով այնպիսի օտարականաց, որք վերոյիշեալ Կ. Նոյմանի, Լօրտ Պայրոնի, Սիլվէսթր տը Սասիի և այլոց նման՝ արժանիք գրաւած են Հայ լեզուի ու գրականութեան ուսման մէջ։

Ամբողջ միաբանութիւնն այժմ 60ի չափ աբեղաներէ և մի քանի աշխարհականներէ կ'բաղկանայ։ Նոցա արդիւնքներու գլխաւոր աղբիւրը դրատպութիւն է։ Ի միտ առնելով թէ ինչ մեծ քանակութեամբ կ'տարածուին առ մեզ հոգեշահ անուանեալ գրքերը, պէտք է եզրափակել որ Մխիթարեանք ևս բնաւ վատ առևտուր չեն աներ այս տեսակ գրքեր սիրելով չորս միլիոն հաշուող Հայերու մէջ։* Ունին հարկաւ պատմական ու բառագրական մեծագոյն տպագրութիւնք, որք ոչ շահու՝ ակնկալութեամբ հրատարակուած են, սակայն և այնպէս ես ինքս առիթ ունեցայ գրավաճառական Ճարպկութեան զուարճալի յատ-

*Արդարև այսպէս էր ատեն մը. բայց քանի որ այժմ Մխիթարեանք Անսխալականին խոստովանող ստրուկներն են, քանի որ իրենց՝ մանաւանդ հոգեշահ կոչուած գործերն ժէզվիթութիւն կ'հոտին, ողջամիտ հայք մեծ զգուշութեամբ կ'դպչին անոնց, եւ ոմանք դեռ նոր սթափելով կ'հասկրնան թէ՝ ինչպէս Մխիթարեանք՝ հայրենասիրութեան քողով՝ մինչեւ անգամ պարզ դասագրեանց մէջ առիթ կ'գտնեն պապականութիւն քարոզելու։

Ծ. Եր.

կութիւն մը նշմարել նոցա վրայ։ Երբ հարցուցի իմ պարզուկ ու համեստ առաջնորդիս թէ՝ ո՞վ էր արդեօք թանգարանի մէջ գրուած Գերմանօ-Ֆրանսական նոր պատերազմի այն եռահատոր պատմութեան հեղինակը — 'ի զարմանս իմ պատասխանեց թէ ի՞նչն էր և թէ Ֆրանսիոյ և Իտալիոյ լրագրական լուրերուն հետևելով յօրինած էր զայն։ Ուրեմն ամ զիտէ ինչ սուտերով լի է այդ պատմութիւնը, մտածեցի ես՝ առանց բան ասելու վարդապետին։ «Սակայն այս գործը մեզ ձեռք չտուաւ, յարեց նա. աւասիկ հատորներն անվաճառ կ'մնան և մեք ալաս կ'կրենք»։ Ուրիշ վարդապետի մ'ասելով՝ միաբանք աւելի նիւթական շահ ստանալու յոյս ունին Գրիմմի ընտանեկան առակներու թարգմանութենէն, մանաւանդ զի ժողովրդական դրականութեան այս տեսակը դեռ յայտնի չէ Հայերուն։

Իմ առաջնորդս — սա էր Հ. Իսավէրտեան ուսումնական վարդապետը — հաղորդեց ինձ որ՝ նա արդէն աւարտած է Հայոց դրականութեան ընդարձակ պատմութիւնն և շուտով զայն տպելուէ։ Այս տեղեկութիւնն էլ ընդունելէս վերջը խնդրեցի զնա մայրենել զիս ըստ Պայրօնի սենեակը և այն տեղ կրկին միայայ ընկերիս հետ։ Սա զբաղած էր Հայ ձեռագիրներու հեաազօտութեամբ, որք շատ սիրուն գրուած են և յոյժ վառվռուն գոյներով նկարուած։ Երկու հազար օրինակ համարող այս ժողովածոյն քանակութեամբ ևս երևելիներէն մին է՝ տեղի տալով ըստ թուոյ միայն Էջմիածնի ձեռագիրներու հաւաքումն, որն որ Մխիթարեաններու ասելով՝ շատ նշանաւոր օրինակներ չունի։ Իրաւ է այս թէ ոչ — չգիտեմ. սակայն եթէ ձեռագիրներու գործադրութեան, այսինքն նոցա փութաջան մշակութեան և տպագրութեան գալու լինինք, տարակոյս չմնար որ պատուոյ առաջին տեղը Մխիթարեան վանքին կ'պատկանի։

*
* *

Լօրտ Պայրօնի բնակարանն ընդարձակ, բայց անսքանչելի սրահ մի է, ուր անկլիական երևելի բանաստեղծն իւր Վենետկի ապարանքէն վանք գալով՝ գիտնական Հայ վարդապետի մը ձեռքի տակ հայերէն լեզուի կ'զբաղէր։ Ի զուր չէր որ վարժապետն 'ի հանոյս աշակերտին յատկապէս այս սենեակը տուած էր նորան, զի սորա պատուհաններէն նայողի առջև միայն կ'բացուի լիովին կղզոյ սքանչելի դիրքը՝ Ռիվա ճիօվանինի և Փիացէթթայի հոյակապ տեսարանին դէմ յանգիման։ Ուրեմն այս տեղ կ'սիրէր մնալ և հայերէն բառեր սերտելանկ-

լիացի բանաստեղծ Լօրտը, երբ Վենետիկի կառնավալի մաշող զբօսանքներէ խորշելով՝ մերթ ընդ մերթ իւր սրտին հանդիստ տալու կը տենչար — I found that my mind wanted something craggy to break upon — կ'զգամ՝ որ ինձ ժայռապինդ բան մի հարկաւոր է՝ վրան խորտակուելու համար, կ'գրէ նա իւր ընկեր Մուրին, և մի այլ նամակի մէջ իւր հայերէն ուսանելու շարժառիթն աւելի բացատրելով կ'ըսէ թէ այն ժամանակ՝ այսինքն 1816ին այնպիսի հոգեկան վիճակի մէջ կ'գտնուէր, որ երևակայութեան բնաւ դրդիռ չտուող և ամիսոփ մտադրութիւն պահանջող ծանր աշխատութեան կարօտ կ'ըզգար։ Արդեօք ոչքան յառաջադիմութիւն արաւ հայերէնի մէջ։ Նորա լեզուագիտական հանճարը յայտնի է և գիտենք, որ բազում՝ ջանիւք ալբաներէն և յունարէն ուսած էր. հայերէնի ևս — որ բնաւ դիւրին լեզուներէն մէկը չէ — բուն անկլիական տակնուութեամբ կ'հետեւէր, ծաղր անելով մի քանի ֆրանսական երիտասարդներու յողդողդութեան վրայ, որ քանի մը տարի առաջ, մինչդեռ 'ի Փարիզ հայերէն լեզուի բեմ՝ մի հաստատելու միաք կար, այս լեզուի դժուարութեանց յաղթանակելու հերոսական որոշում՝ արած էին։ «Երկուշաբթի առաւօտ մը, կ'գրէ նա, բորբոքուն եռանդով վառուած քսան հոգի աշխոյժ երիտասարդք եկան այս տեղ, իւրեանց աղջին վայել դիւցազնական քաջութեամբ կրցան դիմանալ մինչև հինգշաբթի, բայց այս միջոցին քսանէն տասնեւվեց հոգիք պարտուեցան 28 տառերէն, և սոցա թիւն է 38։ Պէտք է ասել որ սա այբուբենի Վաթէրլօօ էր իսկապէս։»

Տարակոյս չկայ որ Պայրօն տիրեց հայերէն գրոյն, զի Մխիթարեանք մինչև այժմ դեռ պահած ունին նորա հայերէն ձեռագիրն ու նորա թարգմանութեան փորձերն Մովսէս Խորենացիէն և ուրիշներէն. սակայն Պայրօնի և Հ. Աւգերեանի անուններն իւր վրայ կրողայն Հայերէն–Անկլիարէն համառօտ քերականութեան բուն հեղինակը նա չէ, այլ միայն Աւգերեան։ Գոնեա Նօյման միայն յԱւգերեանէ յօրինեալ այս տեսակ գիրք մը նշանակած է, առ որ Պայրօն յառաջաբան մի ևեթ գրած է եղեր, որ Հայաստանի մեծապոյն մասին տիրապետող իշխանի դէմ լարեալ լինելով՝ տպագրութեան յարմար չէ տեսնուեր։ Բայց ոչքան և լինէր նորա հայերէնագիտութեան չափը, այնու ամենայնիւ նորա դեկերումն 'ի Ս. Ղազար նշանաւոր դէպք մի կը կազմէ իւր փոթորկայոյզ կեանքի մէջ, դէպք մի որ երկրի աւելի մեծաղարմ բանաստեղծի գրչով ևս հոչակուեցաւ յետոյ։ Բավարիոյ

Լուդվիգ Ա. Թագաւորի ոգեշունչ տաղաչափութիւնը զոր նա գրած էր 'ի Ս. Ղազար 1841ին, հեանեալ տողերով կ'սկսի. «Այս վանքի որմերու մէջ այնպիսի հանգիստ մի կ'տիրէ, զոր աշխարհ չտար մեզ այլուրեք. և նա յորմէ վաղուց արդէն փախած էր այս հանգիստը և որ մրրկայոյզ կ'ծփար ալեաց մէջ — ինքն Պայրօն ճաշակեց զայն այս տեղ, բայց չկրցաւ պահել զայն իւր սրտում։»

Պայրօնի յարաբերութիւնքն Մխիթարեանց հետ ոչ թէ միայն թագաւորական արքայի սրտազեղութեան աւիթ տուին, այլև գիտութեան ևս օգուտ բերին՝ գէթ անտղղակի կերպիւ. զի այս դարուս հայերէն լեզուի, գրականութեան ու պատմութեան մէջ փոքր 'ի շատէ արդիւնաւոր երևցող բոլոր արևելագէտք նորա օրինակին հետևելով՝ հարկ համարեցին գէթ մի քանի ժամանակ Վենետիկ մնալու՝ այս կենդանի աղբիւրէն քաղելու համար։ Վերջապէս և նոյն իսկ Մխիթարեանք գիտցան իւրեանց շահին յարմար արդիւնաւորել Պայրօնի դէպքը՝ տիեզերահռչակ բանաստեղծի պէսպէս յիշատակները վաճառելով անկլիացի և ամերիկայի բազմաթիւ հիւրերուն։ Այսպէս, օրինակի համար, նոքա վերստին տպեցին Ուսկերեանի Հայերէն–Անկլիերէն քերականութիւնը, որ իւր ճակտին լրտա Պայրօնի անունը կրելով անկլիացի և ամերիկացի մուշտարիներ կ'ոլսայ և որ, պէտք է ասել, արժանի ևս է դնուելու իւր գործնական պիտանութեան աղագաւ։ Մի այլ վայելչաղարդ և թանկագին գրքոյկի մէջ ամփոփուած են իբրև «Lord Byrons Armenian Exercices and Poetry» նորա վերն յիշուած հայերէն մարզմունքը հանդերձ իւր մի քանի ոտանաւորներու թարգմանութեամբ, որ գրքի երեսին նայելով կարելի է նորա գրչին յատկայրնել. բայց աւելորդ է անպամ յիշել որ թարգմանութիւնը բնաւ նորանը չէ։

Այսպէս ուրեմն Հայ վարդապետներն ուսումնական և գիտնական յաջողակութեան հետ՝ գործնական հնարագիտութիւն ևս գիտեն միաւորել ճարպկօրէն — բնութեան յատկանիշ մը որ սեփական է Հայկայ զաւակներուն՝ արևելեան Յոյներու դրոշմ դնելով նոցա վրայ։ Եւ իրաւ, ինչպէս որ Յոյներն յԱրևմուտս վաղուց 'ի վեր ոչ թէ միայն հանճարով յայտնի են, այլև ազահութեամբ ու նենգութեամբ ևս վատ անուն ժառանգած, նոյնպէս և Հայերն չափազանց շահասիրութեան պատճառով նուազ սէր կ'վայելեն Արևելքի մէջ։ Այս նկատմամբ ասիական առած մը կ'ըսէ. մինչև անգամ, որ մէկ Հայուն երեք Յոյն քիչ կ'գայ։ Գուցէ և ճշմարիտ լինի այս խօսքը, եթէ յիշենք իշխանական ճոխութեան հասած այն բազմաթիւ Հայ վաճառականները,

որք կ'երևին* աշխարհիս գրեթէ ամէն կողմերում։ Ընդունակութեամբ և ոգեկան արգասաւորութեամբ Հայերն թէև շատ ստոր են նախնի Յոյներէն, բայց իրեանց սակաւ թուոյն նայելով՝ համարեա թէ նիւնչափ նշանաւոր դիրք ունին բռնած Արևմտեան Ասիոյ մէջ, որչափ որ նշանաւոր էր հին Հելլեններու դիրքն Եւրոպայում։

Մեր գիտնական առաջնորդը կատարեալ իրաւամբ Ասիոյ ամենաշնորհալի ազգը կ'անուանէ զնոսա Հայաստանի աշխարհագրութեան վերաբերեալ փոքրիկ գրքոյկի մը մէջ, զոր մեք գնեցինք վանքէն մեկնելիս։ Արդարև նոքա անչափ յառաջդիմած են բանդագուշութեան մէջ ընկզմեալ Հնդկացիներէն և իսպառ ապականեալ պարսիկներէն, թէև այս երկու ազգերու հետ մէկ արմատէ ծագելով՝ սոյա նման հնդեվրոպական մեծ ընտանեաց ճիւղին կ'պատկանին։ Սակայն կարելի չէ արդեօք ենթադրել որ նոքա ամենահին ժամանակին արդէն բաժնուած լինէին ազգութեամբ իրարու շատ մերձ Հնդկացիներէն և Պարսիկներէն։ Հայոց լեզուի Հնդեվրոպական բնաւորութիւնը նախ Պոփի յերևան հանեց յաջողութեամբ իւր համեմատական քերականութեան մէջ։ այնուհետև Վիլհելմի Ֆրիդրիք Միւլլէր անուանի գիտնականն էր որ վերստին խորաքնին հետազօտութեան ենթարկեց այս լեզուի յոյժ տարօրինակ զարգացեալ ձայներու ու ձևերու գրութիւնը։ Բայց ես չեմ կրնար համաձայնիլ այն գլխաւոր մտքին որում՝ նա կ'հետևի իւր խորիմաստ յօդուածներու մէջ «յաղագս ձայնից, հոլովման անուանց, ածականաց բայից և կանոնաց վերջավանգից հայերէն լեզուի»։ Ինձ կ'թուի թէ այս լեզուն իրանեան բարբառներու շրջանին չպատկանիր, այլ՝ ինչպէս որ մտադիր եմ մանրամասնօրէն ապացուցանել այլուրեք՝ հնդեվրոպական լեզուներու մեծ արմատի ասիական բաժնին վերաբերեալ, պարսկերէնին և հնդկականին համադաս՝ անկախ անդամ կը կազմէ։ Եւ զի հայերէնի մէջ ստէպ յերևան եկող քանի մի ձևերն միայն Սանսկրիտէն սկիզբ կ'առնուն և ոչ թէ սորամէ շեղուող հին իրանեանէն, ուստի նոյն իսկ Միւլլերի շօշափելի կերպով յառաջ բերած բազում լեզուագիտական իրողութիւններն արդէն հերիք են լիովին ապացուցանելու, որ հայերէն լեզուն հին իրանեանէն չծագիր և երկրորդական ձև չկրնար համարուիլ։

(Augsburger Allgemeine Zeitung, N° 144)

ԺԷՆԷՎ Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

*Պէտք էր ասել կ'երևէին, երբ առեւտրական ասպարէզի վրայ Հայ վաճառականք չէին հանդիպեր այն լուսաւորեալ ոսոխներուն, որոց այժմ պարտ են տեղի տալ իրեանց տգիտութեան պատճառով։ Ծ. Թարգմ.

Պ. ՏԻՒԼՕՐԻԷԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ներկայ ուսումնական տարին սկսուելով, Հայագէտ Պ. Տիւլօրիէն էլ սկսեց իւր դասախօսութիւններն արևելեան կենդանի լեզուների մասնաւոր Ճեմարանում։

Նախընթաց դասախօսութեան մէջ մի քանի խօսքով յայտնեց առհասարակ Հայկական լեզուի ուսումնասիրելու նշանակութիւնը, մանաւանդ արևելքի պատմութեան համար և աւելացրեց, թէ՝ լսող Ֆրանսիացիների խնդրի համեմատ՝ այս տարի գլխաւորապէս համեմատական թարգմանութեամբ պէտք է զբաղուի, 'ի հարկէ Հայերէնից Ֆրանսերէն։

Հետևեալ դասերում մի համառօտ Հայ–դպրութեան պատմութիւն տալու, հրատիրելով լսողների ուշադրութիւնը մեր ականաւոր մատենագրների վրայ, որոնցից գիտնական պրոֆեսորը թարգմանութեան համար ընտրեց Մովսէս Խորենացու պատմութիւնը, Դաւիթ Անյաղթի ստորագրութիւն Արիստոտէլի անունով գրուածը և Եղնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց» ուսումնասիրելու արժանի գիրքը։

Աւելորդ եմ համարում կրկնել այստեղ Պ. Տիւլօրիէի յայտնած կարծիքը Մովսէս Խորենացու անդին պատմութեան հաւատարմութեանը վրայ, որ մեր բանասէրներին արդէն յայտնի է։

Իսկ Դաւիթ Անյաղթի մասին խօսելով, ուրիշ բաների հետ ասաց և այն, թէ նա առաջին անգամ փորձեց գործ դնել և հիմնել Հայ–փիլիսոփայական լեզու, օգուտ քաղելով Յունականից, որի գրականութեամբ սաստիկ վարժուած, ընկաւ նորա ազդեցութեան տակ։ Եւ այս շօշափելի ազդեցութիւնը, որ Հայկական լեզուին անսորժելի չէ, ոչ թէ միայն նորա թարգմանութիւնների մէջէ երևում, ինչպէս օրինակ Արիստոտէլի ստորագրութեան մէջ, որ համարեա բառ առ բառ թարգմանած է, այլև Անյաղթի սեպհական գրուածներում։

Բայց և Եղնիկի «Եղծ Աղանդոցի» առիթով խօսածը, որ շատ հետաքրքիր է, թող ամբողջութեամբ առաջ բերեմ պատուելի ընթերցողներին և առաւել Հայ բանասէրներին։

«Քրիստոնէութեան հենց առաջին դարում Թովմաս առաքեալը Քրիստոսի հրամանով հօթանասուներկու աշակերտներից մէկին՝ Թադէ-

ոսին ուղարկեց վերին Միջագետի (Հայաստան) Եդեսիա քաղաքը, Ար-զար թագաւորին բժշկելու և նոր հաւատը տարածելու համար։

«Թադէոսը ուրիշ շատերին բժշկելուց ու մկրտելուց յետոյ, սկսում է համարձակ քարոզել քրիստոնէութիւնը Եդեսիայում, որտեղից դնում է Վերին Հայաստան մի և նոյն նպատակով։

«Այսպէս ուրեմն Եդեսիան, Թադէոսը ու վերջերը նորա հետ միացող Բարդուղիմէոսը քրիստոնէութեան առաջին սերմերը ցանում են Հայաստանում։

«Բայց այս քրիստոնէութիւնը, որ սկիզբը առել էր Եդեսիայից սիմիտական հասարակութեան մէջ, չէր կարող արմատ բռնել Հայերի մէջ, որ Հնդկա-Եւրոպական ցեղին են պատկանում։

«Եւ, ինչպէս յայտնի է, այդ Ասորական քրիստոնէութիւնը յառաջադիմութիւն չէ անում Հայաստանում և քիչ առ քիչ անյայտանում էր։

Գուցէ բոլորովին էլ անյայտանար, եթէ չորրորդ դարուայ սկզբում չվերանորոգուէր Գրիգոր Լուսաւորչի ձեռքով աւելի հաստատ աղբիւրում։

«Հայոց հասարակութեան և ժողովրդի առաջնորդները գրաւած այս նոր վարդապետութեամբ, յափշտակութեամբ սկսեցին ծծել նոր մտքեր և գաղափարներ, այնպէս որ չորրորդ ու յաջորդ հինգերորդ դարը ներկայանում են մեր առաջ Հայոց ազգի վերանորոգութեան և մտքի զարգացման դարեր։

«Բայց արդեօք այս մեծ յեղափոխական գործը կարելի՞ էր խաղաղ և հանդարտ կերպով կատարել ժողովրդի մէջ։ Միթէ մի ամբողջ ազգ կարող էր առանց պատերազմի և ընդդիմադրութեան թողնել իւր հին, թերևս նախապաշարուած, սակայն իւր սիրելի կրօնը։ — Ոչ, թող պնդեն այն ժամանակի գրողները, թէ Հայ ազգը միանգամայն յափշտակութեամբ կատարեց այս մեծ փոփոխումը իւր կեանքի մէջ — մենք բնական օրէնքները դիտենալով, անթեք կը հաստատենք որ մեծ էին արդելքները և քրիստոնէութեան յաղթութիւնը լիազօր չէր։ Ասածիս ապացոյց կարող է լինել Խորենացու առաջ բերած հեթանոսական հին երգերը, որ իւր ժամանակ ժողովրդի մէջ պահպանվում ու երգվում էին։ Արլէշներին հաւատալը նոյնպէս շատ ժամանակ կենդանի էր։ Եւ ով կարող է ասել, որ մինչև անդամ ներկայումս Հայ ազգը ազատ է հեթանոսական աւանդութիւններից։

«Ձևերը փոփոխուեցան, մի քանի նոր մտքեր պատուաստեցան, բայց հիմքը նոյն էր մնում, դժուար ու փշոտ էր յեղափոխողների գործը։

«Ինքը Յունաստանն էլ նպաստելով քրիստոնէութեան տարածմանը Հայաստանում, ներս է մտցնում և իւր հեթանոս փիլիսոփայական գաղափարները, որ հակառակ էին քրիստոնէութեան։ Սկսա երկրորդ զօրեղ արգելքը ժողովրդի պահպանողականութենից յետոյ քրիստոնէութեան տարածման և արմատ բռնելուն։ Սակայն սորանք չէին միակ արգելքները։ Պարսկաստանը տեսնելով, որ կրօնական միութեամբ Յունաստանը աւելի մօտիկ յարաբերութիւն կարող է ունենալ Հայաստանի հետ և նախագուշակելով այս միաբանութեան իրան անհաճոյ հետևանքները, աշխատում էր, որքան կարող էր, յետ դարձրնել Հայ ազգը դէպի հին հեթանոսութիւնը։ Սա, Պարսկաստանը, իւր անթիւ զօրքերով, իւր հաւասի երկու սկզբունքներով վերջին թշնամին չէր։ Հէնց քրիստոնէութիւնն իւր յեղափոխական շարժման, իւր նորաբարդ փիլիսոփայութեան մշակութեան մէջ ծայրէ ծայր էր ընկնում և առաջ քան թէ կարողացաւ յարաբերական ճշմարտութիւն հաստատել, քանի քանի նորա ուրիշ աստիճաններից պիտի անցնէր, որոց քրիստոնէութիւնը հերետիկոսութիւն էր անուանում և ինչպէս թշնամու դէմ պատերազմում։ — Բաւական է. մենք աշխատեցինք ցոյց տալ քրիստոնէութեան առաջին ամենամեծ արգելքները Հայաստանում. աւելացնենք միայն, որ այն ժամանակի կրօնական գրականութիւնն էլ այդպէս էր հասկանում նոր կրօնքի դրութիւնը և կարողութեան չափ աշխատում էր առաջն առնել նորա անկմանը։ Եղնիկը այդ դրողներից ամենազօրեղն է, որ իր գրքի մէջ հերքում է իւր վրայ ազդած փիլիսոփայական գաղափարները»։ —

Պ. Տիլլորիէն չբաւականացաւ միայն դասախօսութիւններով։ Նոր բերումն Փարիզի արտաքին գործոց նախարարի գիւանների մէջ գտաւ Աւետիք Կ. Պօլսի և Երուսաղէմի Հայ–պատրիարքի ինքնագիր կենսագրութիւնը, որի հետ նոյնպէս նորա շարադրած փոքրիկ բանաստեղծութիւններ, աղօթքներ, աղերսագրեր, ֆրանսերէն լեզուով գրած թղթեր Աւետիքին վերաբերեալ, որք, ինչպէս ասում է պրոֆեսորը, մի պատմական լոյս են սփռում թէ Աւետիքի կեանքի և թէ իւր ժամանակի Հայոց պատմութեան վրայ։

Կենսագրութիւնը, որ սկսում է հեղինակը իւր ծնունդեան օրից (1657 թ.) շատ հետաքրքիր է։ Նա պատմում է իւր մանկութեան և պատանեկութեան տարիների անցնելը, իւր պապից սովորելով գրել կարդալը. յետոյ հօր արհեստին (ջուլհակութիւն) հմտանալով և մի Յակովբ անունով վարդապետից դաստիարակուելը, եկեղեցիներ շինե-

լը, զանազան ճանապարհորդութիւնները և վերջապէս սէր ունենալով հոգևորականութեան ինչպէս հասարակ տիրացութիւնից, մեծ մարդկանց միջնորդութեամբ, բարձրանում է մինչև պատրիարքութեան աստիճանը։ Կաթոլիկութիւնը, որ կամենում էր տարածել իւր համաշխարհային զօրութիւնը տիեզերքիս ամեն կողմը, անուշադիր չէ թողնում Աւետիք պատրիարքին էլ Կ. Պոլսում, ուր իրան գործիք ընտրելով այն ժամանակի Ֆրանսական դեսպանին, որ բռնում և ուղարկում է Աւետիքին Ֆրանսիա, որպէս, ես կ'ասեմ՝ պապական բանտարկեալ։

Մինչև անգամ Ֆրանսայի թագաւոր Լուի տասնուչորրորդն էլ խառնվում է Աւետիքի գործերում և նպատակներ ունենալով՝ մի բերդից, մի մենաստանից դէպի միւսն է փոխադրել տալիս։

Աւետիքի վերջին բանտարկութեան տեղը լինում է Փարիզը, ուր եզուիտները, ինչպէս և ուրիշ տեղերում, կարծես, նորից դաստիարակում են խեղճ Պատրիարքին իրանց եզուիտական հոգով, որի ազդեցութիւնը լաւ երևում է յիշեալ կենսագրութեան մէջ։

Մահը հասնելով նորան Փարիզում, յափշտակում է անսխալականների ձեռքից, որոց դեռ ևս չեն ազատուել Հայերը դժբաղդապէս։

Կենսագրութեան մէջ մենք պատահում ենք նոյնպէս Հայոց գրաբար և աշխարհաբար լեզուների մրցումը ու խառնուելը Աւետիքի գրչի տակ, որ ձանձրացնում են ընթերցողին։ Աւետիք պատրիարքի կեանքը կարող եմ ասել, մի շատ հարուստ, գեղեցիկ պատմական վիպասանութեան նիւթ է տալիս։

Այս կենսագրութիւնը միայն օրինակելով, Պ. Տիւլօրիէն մի յառաջաբանութեամբ ուղարկեց «Մասիս» լրագրին, որ և հրատարակեց տարբոյս մի քանի համարներում (թիւ 1488—1500)։

Բացի այս ուսումնական և պատմական աշխատութիւններից Պ. Տիւլօրիէն ներկայացուց պարապած է կազմելով մի մանրամասն ցուցակ Փարիզի ազգային գրադարանի մէջ գտնուող Հայ-ձեռագրների, որոց թիւը մօտ 270ի է հասնում։

Մենք չենք կարող չյայտնել մեր խորին շնորհակալութիւնը Պ. պրոֆէսսոր Տիւլօրիէին, որ չէ դադարում իւր գիտական դատողութիւններն և խուզարկութիւնները անել մեր պատմութեան և գրականութեան համար, և այսպէս ծանօթացընել մեր անցեալ ու ներկայ կեանքը գիտական աշխարհին։

1874, ապրիլ։

ՑԱՐՈՑ
(Մշակ)

ԿԱՐՆՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Կարին, 30 Մայիս 1874։

Խմբագիր Տէր,

Կարին իր աշխարհագրական դիրքովը, վաճառականութեամբը, բազմամարդութեամբն և հարստութեամբը Պոնտոսի ափունքներէն մինչև Ռուսական և Պարսկական սահմանագլուխները գտնուած քաղաքներուն էն առաջինն ըլլալով՝ իր համբաւոյն կը վայլէր որ Զմիւռնիայէն Նուազ տարբերութեամբ բարեկարգ վարժարան մը ունենար. բայց աւաղ, ազգասէր Ճանապարհորդը դատապարտուած է արտասուաց գառն հեղեղներ թափելու դպրոցին այցելութեան ելնելու միջոցին՝ տեսնելով հոն ամենայն ինչ հակառակ համբաւին և իր (Ճանապարհորդին) յոյսերուն. ուսումնարանը թէպէտև նորոգ կառուցեալ և բաւական շքեղ, բայց աշակերտաց թուոյն նայելով խիստ անձուկ է։ Մէջը կան 409 աշակերտք որք կը կառավարուին հինգ անուամբ ևեթ կառավարչաց հսկողութեան ներքև, ունին չորս դասատու և մի տեսուչ, զոր Պօլսէն բերել տուին վարժարանը բարեկարգելու թէութեամբ։ Կարենար թերևս տեսուչը բարեկարգութիւնը մտցընել վարժարանի մէջ եթէ բարեկարգութեան համար պէտք եղած մարդիկը չպակսէին և անոր դէմ անողոքի արդելքներ չյարուցուէին։ Ինն դաստիարակ և դասատու՝ բաց 'ի Հայկաբան Զաքարեան Կարապետ պատուելիէն՝ բառին Ճիշդ նշանակութեամբն անպիտան են, որք կրթութիւնը կը չարչարեն աւելի քան թէ կ'ուսուցանեն։ Կրնայ մակաբերուիլ ապաքէն թէ ասոնց ձեռքը յանձնուած մանկանց ապագայն ինչ արժէք կրնայ ունենալ։ Պատմուածին նայելով տեսուչը յուսահատած բոլորովին և վարժարանին բարեկարգութիւնը անհնարին դատած 'ի մօտոյ պիտի վերադառնայ Պօլիս, եռամսեայ քննութեան մը հանդիսին առթիւ այս ամենը հրապարակաւ խօսելով ժողովրդեան. . . և միայն այս տեսուչը չէ եղեր որ այսպէս խոյս կու տայ իր պաշտօնէն, այլև իր նախորդներն ալ պարտաւորուած են եղեր Ճիշդ այս Ճանբուն հետևելու իրենց առջին ելած արդելքներուն յաղթելու անկարող դտնուելով։ Հոս ընթերցողին մտքին առջև անշուշտ խնդիր մը

կը ներկայանայ և Ի՛ստիպուի հարցնել թէ ինչ է այն զաղանի պատ-
ճառն որ ազգային զպրոցին յառաջադիմութեան այսպէս արգելք և
խափան կը դնէ. ուստի թող ներսի ինձ ընթերցողը գոհ ընելու հա-
մար բացայայտ կերպով այս սպառնալն բացատրութիւնը տալ։

Հարկ է անհերքելի համոզուիլ թէ այս կողմերն առաջնորդները մեծ
ազդեցութիւն մը ունին ժողովրդեան վրայ, և նոքա կարող են ամեն
բան անարգել գործել թէ բարի և թէ չար։ Խմնոտուն աշխարհականը՝
Ճշմարտութիւն մը որչափ զօրաւոր և պայծառ փաստերով ալ ժողո-
վրդեան ներկայացնեն, տակաւին ոչ որ նոցա կարեւորութիւն կու-
տայ, իսկ առաջնորդաց սուրբ շրթունքներէն գուրս թռուած խօսք մը՝
թէպէտ առանց փաստի՝ թէպէտ սուտ և սխալ, իբրեւ պատգամանա-
ջական խոնարհութիւն և երկրպագութիւն կ'ընդունի։ Նոցա բերնէն
ելած բառ մը «նա ասաց»ի դիժ ունի։

Յարութիւն սրբազանը 15 տարի յառաջ Կարնոյ առաջնորդական
պաշտօնին գլուխն անցած առեն կը տեսնէ որ իր նախորդը ժողո-
վրդին մէջ ուստամեսիրական մեծ եռանդ մը բորբոքած է, կը ուժգո-
հի, կը սրտմտի, կը հայհոյէ նոքա գերեզմանին և կը մտադրէ այս
վնասակար եռանդը շիջուցանել յարատեւապէս աշխատելով։ Եւ ինչ
դժուարութիւն կրնայ ըլլալ յաջողելու Լէյոլայի աշակերտի մը այս-
պիսի նպատակի մը համար և այսպիսի ուսմամբ ժողովրդեան մը մէջ։
Ի՛նչպէս ուղղակի և անուղղակի միջոցներով հարուածել, նախատել և
թշնամանել այն անկրօն և ՐԵՊՆԱՏԷՍ երիտասարդները որք յաճախակի
դպրոց կ'արտասանէին, արդի ուսմունքներն և դիւաց թիւններն իբրեւ
անաստուածութեան տաւնորդող դպրոցներ ցուցնել ժողովրդեան,
համոզել ժողովուրդը թէ իրենց պէս ազգասայ համար հերիք է որ
զուակներն հասարակ ընթերցմունքը միայն սորվին և այնու հետեւ իրենց
օրական ապրուստը հայթայթելու ճարը խորհին, թէ յառաջադիմու-
թիւն, լուսաւորութիւն, գաստիարակութիւն այնպիսի բաներ են որ
իրենց թշուառութեան խորխորատը կը փորեն, և այլն և այլն։ Եւ
արդարև Նորին սրբազնութեան ժողովրդին քիմքին ներկայացուցած
այս թոյնը կամաց կամաց նորա երակներուն մէջ տարածուելով թմբե-
ցուց և հիմա կատարեալ տնդայութեան մէջ կը խորտայ։ Սրբազանն
իր նպատակին այսպէս յաջողութեամբ հասնելուն վրայ տրախացած
բայց միանգամայն հասկնալով որ Կարնոյ այս տիտր վիճակին հա-
մար արդար մեղադրանքներէ պիտի չկրնայ ազատ մնալ, դերին կեր-
պարանքը կը փոխէ անմիջապէս և Ի՛տալ ամեն յանցանք ժողովրդեան

վերադրել։ Ուստի Մասիսեանն ձեռնարկութեանց դէմ այլ ևս ինք չմնաքաւիր, այլ ժողովուրդը։ Ուստի Մասիսեան խորհուրդներ կը կազմէ և ստոնոյ ազգայնորդներ կը կարդայ գործելու, բայց ինչ ընէ Սրբազանը երբ ժողովուրդը նոցա դէմ արդելքներ կը յարուցանէ։ Թաղական խորհրդին գործոցը բարեկարգելու թէս թեամբ Պօլսէն բերել տուած տեսուչը գրկախառն կ'ողջունէ և շարունակ իրեն սեղանակից ընելով կը պատուէ զայն։ բայց ինչ ընէ Նարին սրբազնութիւնը երբ տեսչին երեք ամսէ 'ի վեր ներկայացուցած քննիչքամբ ոչ թէ չվաստակցուիր այլև նկատողութեան խոկ չառնուիր, և թէ տեսուչը էն յետոյ գաստատուն կամ կառավարիչը փոխելու անկարողութեան մէջ կը գտնուի։ Անիծեմ՝ Սահմանադրութիւնն արդէն ամէն իրաւասութիւն, այժ և զորութիւն առաջնորդներէն վերցուցած և ժողովներուն է յանձնացուցած։ ուրեմն օրինօք ձեռքերն և ոտքերը կապուած առաջնորդներն ինչ կրնան ընել։ . . . . . : Եկ, թերևս պարզամիտները հաստատեն։

Խմբագիր տէր, - ահա ազգային գործոցին այս քաջալերելի վիճակն էր որ քաղաքիս մէջ գտնուող խիստ փոքրաթիւ լուսամիտ խումբը վերջին ծայր յուսահատութեան հասցուցեալ զէթ իրենց զատակոյց ազգային չսպասելու համար բնկերութիւն մը կազմեցին և անկախ գործոցի մը հաստատութեան ձեռնարկեցին, զոր արդէն տարուս սպրիլ ամսէն սկսեալ բացուեցաւ 40 տղայի համար միայն։ Յաջողակ դաստատ մը բերել տուին Պօլսէն, և երկու հատ ալ հոս Ճարեցին բայց 'ի երմենեկ դասատուներէն։ Անցեալ թղթատարով Պօլսէն երկու դասատու դարձեալ ուղեցին։ Այս գործոցին վիճակը շատ լաւ և քաջալերիչ է, մանաւանդ բարոյականութեան մասին խիստ հոգ կը տարուի։ Ուսմանց առարկաներն են. Հայերէն, Տաճկերէն, Գաղղիերէն, բուսաբանութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, կրօնք, գեղագրութիւն, գծագրութիւն, երաժշտութիւն և մարմնամարզութիւն։ Փիլ տեղատան մէջ գործոցին յառաջդիմութիւնը փափաք արթնցուց ուրիշ ծնողաց սրտերուն մէջ իրենց զաւակը հոն ղրկելու, և ընկերութեան Ցնորէն խորհրդէն այս փափաքը նկատողութեան առնուելով որոշուեցաւ որ մի և նոյն գործոցին մէջ և մի և նոյն տնօրէնութեան ներքև միայն քանի տղայի համար նախակրթարան մ'ալ բացուի։

Դամակս խիստ երկար ըլլալուն համար յաջորդ նամակիս կը թողում քաղաքիս ազգկանց վարժարանին և Հայ-Գաբա և Մահալլէ-Պաղչէ բնակած թաղերուն նախակրթարանաց վրայ խօսիլ։

Ընդունեցէք յարգանաց հաստատիքը։ ԳԻՏԱԿ

ՅՈՐ ԵՐԻՏԻՆԱՍ ՍԱՐԱՍԱԴԱՐ—ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Սեծապատիւ Խմբագիր ԱբՆելեան Մամլոյ,

Խնդրեմ՝ հեւանակ դրան թիւն հիւրընկալել ձեր ճշմարտախօսութեան մամանեթերթին մէջ։

Սնամ յարգանօք

ՄԱՅԱՐ Վ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Հայրենիք լրագրի* մէջ Գ. ստորագրութեամբ ոմն, որ հաւանակապարար Երուսաղէմէն աքսորուած ուրբաթեան սարկաւագն կ'կարծուի, ԱբՆելեան Մամլոյ մէջ հրատարակած մեր յօդուածոյն դէմ ըստ բաւականին շաղփաղփելէն զինի, կ'յայտարարէ թէ՝ նոյն սարկաւագն, այն է ինքն՝ վարդապետ ձեռնադրուած է։†

Բայց պարտ է հարցանել, թէ ի՞նչպէս վարդապետ եղած է։

Արդեօք Երուսաղէմի Ս. Պատրիարքին ներողութիւն խնդրելով, արդեօք Երուսաղէմի միաբանութեան առջև իւր յանցանքը խոստովանելով և իւր վարքն և բնաւորը ուղղելով, արդեօք Պօլսոյ Արօնական Ժողովոյն մեղայական դիր մատուցանելով և նոյնն առ Ամ. Էսայի Ս. պատրիարքն միջնորդ կոչուցանելով, արդեօք իւր կոչման և ընթացից համար Պօլսոյ Պատրիարքարանէն երաշխաւորութեան վկայագիր ընդունելով։ —

*Տես Հայրենիք Թիւ 3021։

†Ազդարարի ուրարաթեան, կամ՝ ըստ իւր կոկոզարանութեան Գ.... ննջասան իւր խօսական անարջոյն մէջ այսպէս երազած է, որպէս թէ մեր յօդուածը Մելքիսեդեկ վարդապետն խմբագրած է և մեր ստորագրած ենք։ Մինչդեռ յիշեալ վարդապետ եղբայրն ոչ միայն Պաղէստինէն բացակայ, այլեւ յԵւրոպա անգամ ոչ քաղաքի մէջ գտնուին անծանօթ էր մեզ։

Մեք կ'խմացընենք մեր երազատես կրիտիկոսին, որ արդարեւ իւր մտապարծութիւնը չունիմք մեր անձը գիտնական համարելոյ եւ մեր խելապատակն խմաստակութեամբ նայթեցուցանելոյ. բայց, զոհութիւն Աստուծոյ, իւր քաշքուտական ընթաղատութիւնը նշանակելոյ չափ կարողութիւն ունիմք։ Թո՛ղ ապահով լինի այս մասին։ Իսկ եթէ բանազողութիւն կ'որոնէ, Թո՛ղ իւր Գաղիկ ոգբերդութիւնը Ղղեատէ, որոյ մէջ գտնուած զոհնոթ բոնուելէն յետոյ անգամ՝ դարձեալ չէ կամեցած՝ իրեանց տեարց Ղողալ։ Ծ. Հ.

Ո՛չ երբէք։

Այլ ինչպէս։

— Քանի մի անձանց դաղանի թելադրութեանց գործի լինելով և Գեր. Մուրատեանի Եկեղեցական պատմութիւնը խծբծելով, Երուսաղէմի Ս. Պատրիարքին և միաբանութեան դէմ անամօթաբար զրաբանելով, ազգային եկեղեցւոյ և իրատանց թեթեւամտաբար իրը պաշտպան ներկայանալով, և այլն և այլն։

Ահա այս անարգ Ճանապարհաւ արժանացած է վարդապետական կոչման։

Երանի՛ Հայոց ազգին։

Փառք և պատիւ Հայ կղերականաց։

Բայց աւելի լաւ կ՚լինէր, եթէ փոխանակ վարդապետութեան կոչման՝ քանի մի գլուխ բժշկութեան Աւետարան կարդային մեր դատանցող կրիտիկոսի գլխոյն վրայ։

Տարակոյս չկայ որ եթէ այս փառաբուս Ճանապարհը շարունակէ, շուտով եպիսկոպոսութեան աստիճանին ևս կ՚հասնի։

Եւ մոլորիսէ թէ իր վարդապետական կոչման ուխտն իսկ այս ցած նպատակաւ եղած չէ։

Ահա իրը 'ի սրատասխանի Հայրենիքի մեջ հրատարակած իր յօդուածոյն այս չափը բաւական կ՚համարիմք։

— Թող ուրեմն երախտագէտ լինի Երուսաղէմի Ս. Պատրիարքէն և նորա համոզէն միաբանութենէն, որ այն տեղէն արտաքսուելով՝ վարդապետութեան արժանացած է։ Եթէ չարտաքսուէր, 'ի հարկէ վարդապետութեան կոչման այդպէս շուտով չէր կարող հասանիլ և տղայական հրճուանօք յայտարարել, թէ ինքն վարդապետ եղած է։

Իրատանը ունի ինքն իր համար հրճուիլ ոչն աստուծին հանմատ թէ՝

Աբսուտիին գնէր վեղարը,
Ինքն զարնէր, ինքն խաղար։

Բայց որպէս զի փոքր ինչ խելամուտ լինի մեր խեղճ Զիպիլտրոնն՝ թէ վարդապետութիւնն և կրիտիկոսութիւնն իր երևակայած նշանակութիւնը չունին բազմահմուտ և կրօնագէտ ազգայնոց առջև, արժան կ՚համարիմք մեր կարդացած նամակաց միայն հետևեալն օրինակել այս տեղ, որոյ հեղինակն ոչ Զամուրճին է և ոչ Սահակ Ահարոնն, այլ

բովանդակ Ռումանիոյ Հայոց թեան Հանձարեղ և գործունի գլխաւորն։*

«Գերապատիւ տէր Հայր Մելքիսեդեկ,

«Ձեր գերապատուութենէ մեզ շնորհուած նվիրական պատգամաբերեան գիրքն և օրացոյցն ընկալայ մեծաւ շնորհակալութեամբ 'ի ձեռն Ալթոսիչ Մանուկ աղայի։

«Ահա գիրք մը՝ որ Հայկական գրականութեան մեծ վաստակ կ'ընծայէ, խել մը փաստմոլ, ծոյլ և անպարծ վանական վարդապետաց և եպիսկոպոսաց թագին տակ կծկտող մարդոց չար նախանձը կը շարժէ և բարձրայօն գրագիտաց զաչս գվայրոք յածել կ'ստիպէ։

«Գերապատիւ Հայր, այն լեզուն, որ գիտէ անկեղծ սրտով անպիտանը պախարակել, և ինչիւ չգիտայ արժանաւոր ներբողներ և գովեստներ կարդալ այն անձին, որ լաւ գիտէ 'ի կիր արկանել ղժամանակն 'ի յառաջադիմութիւն բարոյական ազգիս։

«Ճշմարիտ ասելով, Հայր, իմ՝ լեզուս կարող չէ Ձեր այս եղական աշխատասիրութեան գովեստներ յօրինել, քանզի ինքնին գովելի է։ Բայց միայն սա կ'ասեմ թէ՝ օրհնեալ ըլլայ այն գլուխն, որ այսպէս կրօնի և ազգութեան օգտակար և հաստն պտուղներ կ'ընծայէ, օրհնեալ ըլլան այն սիրտն ու միտքը, որ գիտէ զպալ և խարհիլ միշտ ազգին օգտակարը։

*Ազգ. Պատրիարքարանը՝ կրիտիկոս սարկաւագը վարդապետ ձեռնադրելու հրաման տալովն, եթէ իրօք տուած է, կ'հաստատէ,

ա) Թէ Երուսաղէմի մէջ տարբեր, Ե. Պօլսոյ մէջ տարբեր օրինօք կ'դատուին յանցապարտ կրօնաւորները. բ) Թէ եկեղեցական մը տեղ փոխելով կ'փոխէ իր յանցաւորութեան աստիճանը. գ) Թէ ազգ. Պատրիարքարանը չճանչեր Ս. Երուսաղէմի Ս. Պատրիարքին հեղինակութիւնն. դ) Թէ Եպրօ. ժողովը կրիտիկոս սարկաւագին՝ Գեր. Մելք. Մուրատեանցի դէմ գրած ընդդատական խծբծանաց համամիտ կ'գտնուի լռելեայն, նոյն գրքին մէջ գրուած Ս. Պատրիարքին հաստատութեան վճիռը կ'ժխտէ, եւ անոր մէջ հերետութիւն կ'գտնէ, քանի որ սարկաւագին իր խելքով նշանակած մոլորութիւնները պաշտօնապէս չմերժելէն զատ՝ զանի կերպով մը կ'վարձատրէ վարդապետութեան աստիճանին կոչելով . . . :

Մեզի համար փոյթ չէ բնաւ որ սարկաւագ մը՝ անպարտ կամ պարտաւոր՝ վեղար հագեր է, վասն զի գիտենք որ վեղարը վարդապետ չըներ զմարդ, արդէն գիտենք խել մը կրօնականաց չափը, եւ կ'ըսենք՝ վանցի Պողոսին մօտ սարկաւագը սուրբ մ'է, միայն կ'զարմանանք որ մեր եկեղեցական իշխանութիւնն յարգ եւ պատիւ կ'սպասէ ժողովրդեան կողմէ, մինչդեռ ինքզինքն ոչ պատուել եւ ոչ յարգել տալ գիտէ, եւ իր անհեթեթ ընթացքով եւ խաւարասէր ներգործութեանց հպատակութեամբն օր ըստ օրէ վար կ'իջնէ, եւ դեռ պիտի իջնէ . . . :

Գ. Ե.

«Երանի՜ քեզ, անմահ հոգիդ Գու., որ չվարանեցար այսպիսի ազգ-օգուտ աշխատութեան քաղցրահամ պտուղ մը մեր ազգին ընծայել։ Գիտցիք որ Ձեր քաղցը անունը Թորգոմեան տան բարձրավանգակին, այլինքն բաղմապատեան Մասիսի վերայ ոսկի տառերով քանդակուած յաւերժական յիշատակ պիտի մնայ 'ի նախնեաց նոցա, որք լոկ իւրեանց օրհնանքը տարարաստանելն զատ ոչ ինչ գիտեն գործել։

«Գերապատիւ Տէր, ուր որ արևու ծոտապայթ, հոն անշուշտ ստուերական գոյացութիւնք, այսօր խմաստակ տարփատաղ մը, վաղը նախանձոտ վարգապետ մը, և այլն և այլն, Ձեր այս հեղինակութիւնը կ'քննադատեն, կ'զրպարտեն և կ'դատապարտեն։ Դուք մի վհատիք, որ և է խոչընդոտն Ձեզ համար նշանակութիւն չունենայ. մարդուս աշխատութիւնը պտղոյն տնվեհերութիւն և համբերութիւնն է. բա. գիտցիք և տարակոյս մի ունենաք, որ Ձեր կայր թշնամիներն օր մը Ձեր առջև կորագլուխ պիտի խոնարհին։ Մի՛ վհատիք կ'ըսեմ, պատերազմին դաշտը քաջին է և ոչ վատին։

«Օ՛ն ուրեմն յառաջ, յառաջ տարէք Ձեր աշխատութիւնը, քանզի մեր թշուառ ազգին կարօտութիւնն է և տելի շատ։

«Ընդունեցէք, խնդրեմ, շնորհափայլ Տէր, մեր անկեղծ սրտին յարգանքն ու ամենայանքը։

«Պուկրէշ, 13 դեկտ. 1873։ «Ն. Ծ.

ԳԱՐԳԻՆ ԱՀԵՆԵԱՆՑ»

ՏԱՐԵՏՈՒՅՑ ԳՐԱՏՈՒՆԻՑ ԳԻՊԱՐԱՆԻՑ

Մեծարգոյ Խմբագիր,

Անցեալ ամսոյ 11ին Տիւրոնիէնցիներու դպրոցին հայերէնի քննութեան զննուելու առիթն ունեցանք։ Հարցաքննութիւնը հայկաբանութեան, հայոց պատմութեան, հին յունական պատմութեան և դրաբարէ աշխարհարարի թարգմանութեանց վրայ դարձաւ, և ուրախալի ու-

միջոցաբանական էր տեսնել թէ օտար դպրոցի մը մէջ իսկ մայրենի լեզուին ուսանողութիւնն անարատ կը մնար։ Այս մասին մեր ակար քաջալերութիւնները չպլայանք նոյն դպրոցի հոյակերտի դասատու պատուելի Ստեփան Զաղբիեանի որ 16 տարիի մօտ է կը դասախօսէ հոն։

Նոյն հարցաքննութեան ներկայ կը տեսնէինք տասնէ տարի հայ տիկիններ և օրիորդներ որոնք զատկի կամ քրոջ մը պատճառաւ եկած էին։ Մինակ Հռիփսիմեանց վարժարանի քննութեանց հայ կին չերթար . . . շատ հեզ գտնուած ենք մեր ազգային դպրոցի տարեկան հարցաքննութեանց առանց և մէկ մայրը մը տեսնելու հոն . . . կարծես թէ որբերու դպրոց մ՚է . . . ։

Այս անտարբերութեան դլխաւոր պատճառը (մեղ այնպէս կ՚երևի) մեր վարժարանաց Ֆրիոթիւնն է։ Զրկեն աչքի չերեւիր, ու չգրաւեր, ու ապահովենք որ եթէ Հռիփսիմեանց դպրոցին ալ ամենական մը տայի մայրերը՝ պիտի երթային նաև վնասելու թէ աղջիկներն ինչ կ՚ուսանի։

Օտարամոլութիւնն ուրիշ պատճառ մ՚է այս անտերելի ընթացքին, որով յայտնի կ՚երևի թէ ասկաւեն մեր մէջ օտարը սիրելը ազգը ատելու հետ շփոթուած է։

Ազատ փոխանակութեան (Libre échange) կոտակիչ՝ մենք օտարի ուսանողութեան բարեկամ ենք անորմէ լոյս առնելու և ազգին բերելու համար և ասավ իսկ կ՚տանենք այն հայերը որոնք իրենց տարը կ՚տանեն, և՝ որ տարի գէշն է՝ անոր անտարբեր կը մնան։

Զմիւռնիա, 30 յունիս 1874։ Գ. Կ.

Ս. ՍԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՀԱՆԴԷՍԸ

Ամսոյս 20ին Ս. Սեսրոպայ տօնախմբութիւնը տեղի ունեցաւ քաղաքիս ազգային վարժարանին մէջ։ Վերի սրահն՝ ըստ սովորութեան զարդարուած էր, բազմաթիւ ազգայինք ներկայ կ՚գտնուէին։ Եկեղե-

ցեան դասն՝ եկեղեցւոյ աւարտումն եաք՝ դպրոցը եկաւ ձայնաւոր դասուն հետ՝ որ պարզային յարմար երգեր երգելով առջևէն կ'գայ։ Կրօնական արարողութիւնը լմընալով՝ աշակերտք ոմանք այլ և այլ լեզուաւ ճառեր կարդային, և Արժ. Պետրոս վարդապետը կարճ այլ աղդու առենախօսութիւն մ'ըրաւ։

Այս անդամ հանդիսին յատուկ շքեղութիւն և ոգի տուողն եղաւ ձայնաւորաց դասն, որ ազգային քաղցր և սրտաշարժ երգերով հանդիսականաց ուշն ու սիրտը շարժեցին։ Թէև մեր ազգային դպրոցները սակաւներ ունին զոր պարտ է ընալ, բայց 'ի մասնաւորի երգեցողութիւնը բաւական ժամանակէ 'ի վեր անկանոն վիճակի մէջ կ'գտնուէր։ Շատ փորձեր եղան, հետզհետէ ձայնաւոր դասատուներ եկան դային, ընկերութիւններ կազմուեցան որպէս զի մեր հոյակապ տաճարին արժանի դպիրներու խումբ մը հասատատեն, բայց զանազան պատճառներով արդիւնք մը չդոյանալէն զատ՝ աշակերտները դրեթէ վհատեցան և ձայնաւորութենէ հրաժարեցան, տաճարին մէջ կիրակի օրերն իսկ՝ հազիւ ուրեմն մի քանի տիրացուներ կ'երևէին և արդի դասատուն 'ի զուր կ'ջանար իր պաշտօնը վարել, երբ Փափազեան Վարդան էֆէնտին նորակազմ Վահանեան ընկերութեան խնդրանօք յանձն առաւ կրթութեան այս մէկ կարևոր ճիւղը մշակել մեր վարժարանի մէջ։ Արդէն իր դասատուութեան արդիւնքն զգայի կերպով կ'երևի։ Ցիր ու ցան ու վհատ տիրացուներ, իր ձայնին կ'հաւաքուին, աշակերտները կ'ոգևորուին և մեծ խումբ մը կ'կազմեն որ ազգային ընտիր երգիչներ կ'խոստանայ։

Մինչ ցարդ մեր մէջ ազգային երաժշտութիւն դրեթէ չկայ։ Օտար եղանակներ կ'հնչեն շարունակ մեր ականջին՝ օտար բառերով թէ ընտանեաց և թէ ընկերական շրջաններու և երեկոյթներու մէջ, մինչդեռ Կ. Պոլսոյ և Ռուսաստանի հայք այս մասին շատ յառաջ դացած են։ Տեղը չէ երկարօրէն խօսիլ երաժշտութեան, մանաւանդ ժողովրդային երգոց կարևորութեան վրայ։ Այսչափ միայն կ'ըսենք որ մեր ազգային դպրոցներու ծրագրին մէջ անհրաժեշտ է մուծանել դէթ առ այժմ ձայնական երաժշտութեան ուսումն, չէ թէ անձուկ և հին սահմանին, այսինքն լոկ շարականի և ժամերգութեան մէջ պահելով, այլ նոր աւելի մեծ, ընդարձակ ուղղութիւն մը տալով, այնպէս որ ամէն աշակերտ պարտաւոր լինի երգել սորվիլ, ինչպէս որ լեզու կ'սորվի։

Վասն զի «Երաժշտութիւնը լեզու մ'է, կ'ըսէ հեղինակ մը։ Սորվեցուր աշակերտներուն երգն միանգամայն և իրենց մայրենի լե-

զան, և այն ատեն իրենց կարգը թեանց սահմանը կ'ատեցրնեն։ ։ ։ Գրական լեզուն գաղափարներու լեզու մ'է, երաժշտութիւնն ազգայնոց։ Ինչպէս որ մարմնաւորող թիւնն (որ գիտցողաբար մեր գպրոցներու մէջ չկայ՝ թէև քանիցս փորձ փորձեցինք մացրնելու և ամէն անգամ՝ մեր առջև պատ քաշեցին) մարմնոյն կորովը կ'կրկնապատակէ, ինչպէս որ պատմութիւններու և բերթողներու գրուածոց ընթերցումը միտքը կ'ընդարձակէ, նոյնպէս ազգայնոց լեզուին սոլֆեջիութիւնը հոգւոյն շարժումներուն ատելի սղնուութիւն և այժ կ'ադդէ։ Պէտք է աղայոց սրտին մէջ ազնիւ զգացումները, սիրալիր միտումները, վեհանձն ընդդումները զարգացընելու տուիթներն անտես չառնել. մեր պարարն է մաքառիլ ոչ միայն ապիտութեան դէմ, որ մտքի թշուառութիւնն է, այլ ինքնասիրութեան դէմ, որ սրտի թշուառութիւնն է։»

Ահա պատեհ առիթ մ'ունինք։ Փափաղեան Վարդան էֆէնտին ազգային երաժշտութեան նոր թռուցիկ մը պիտի բանայ մեր գպրոցներու մէջ, և հաստատ ենք որ իր կողմէ աշխատութիւն չպիտի խնայէ։ Մինչև ընտիր եկեղեցական գպիրներ այլ ազգային երաժշտութեան հմուտ երգիչներ հասցընելու։

ԻՆՏԻՆԵՐԻՑ

Գ.

Ա.ին հիւսիսեայ նախապաշարումն թէ կինն մարդուս անհաւասար էակ մ'է, անոր կոյր արբանեակն է որ պարտի անոր ամէն հաճոյից հպատակիլ և անոր ամէն մոլութեանց աչք գոցել կամ ներել, այնպիսի յոտի ներգործութիւն մ'ունի ցարդ ընտանեկան կենաց վրայ որ հետզհետէ ամուսնութիւնն լոկ անուանական հիմնարկութիւն մը պիտի դարձընէ։ Մեր կրօնը, մեր կրօնաւորներն անդադար կ'քարոզեն այս նախապաշարումն, և այս կերպով, մինչև ամուսնական սրբութիւն կ'կարդան, չեն իմանար որ կնկան սարկութիւնն աստուածութիւն կ'հաստատեն, միայն կորմէ մարդուն տակը արձակ ասպարէզ մը կ'բանան

էր վատ կրից յապուրդ տալու։ Եւ ինչու, վասն զի այր է, զօրեղ է։ տան մէջ ինքնիշխան տէր է և գուրսն ուզածը գործելու ազատ։ Ազատ է կնկան դէմ օրէնք դարձնելու, ընկերութեան մէջ կնկան իրաւունքը զլանալու, անոր պաշտօնն և միտքը սեղմելու և կերպ մը դերութեան վերածելու։ Հետևապէս կինը պարտաւոր է լռելեայն կրել ոչ միայն իր մարդուն բռնութիւնն, այլև անոր անհաւասարութիւնն։ ոչ միայն ընկերական լուծն, այլև ընտանեկան դատն կսկիծներ որ իր հոգին կ'խորտակեն և իր բոլոքը կ'խեղդեն։

Բայց միթէ ամէն կին նոյն բնութիւնն ունի՞, այն կրաւորական դիրքը կրնա՞ պահել այնպիսի անիրաւութեանց առջև որ ամուսնական ցայմանները հակառակ են, այնպիսի վարմանց առջև որ ընտանիքը կ'խանգարեն։ անշուշտ ոչ։ Եթէ կինը խորամանկ է, եթէ ակամայ միացած է մարդու մը հետ զոր կ'ատէ, պատեհ առիթ կ'համարի իր անուամբ միայն ամուսնոյն ընթացքն, և ինքն ալ իր պարտաւորութենէ դաղանի խուսորելու կ'ջանայ։ Եթէ հպարտ, արիասիրտ, զգայուն արժանի կին մ'է՝ 'ի հարկէ պիտի ընդվիզի անհաւասարիմ ամուսնոյն դէմ և միայնակ տխուր կեանք մը պիտի վարէ, կամ 'ի սպառ անորմէ պիտի զատուի։

«Մարդը կրնայ պիրելպուրը, այլ ոչ կինը։ վասն զի մարդուն ապօրինի սէրն ընտանեաց մէջ հետք չձգեր, մինչդեռ կնկանը զգալի նշաններ կ'թողու և ընտանեկան կապը կ'խզէ։»

Ահա այս է այն անբարոյական փաստն որով մարդ, ընտանեաց հայրն ինքզինքն արդարացընելու կ'ելնէ, և սնապատկառ կ'գործէ ինչ որ ոճիր կ'համարուի կնկան կողմէ գործուելով։ Եւ սակայն, քանի որ կին և մարդ ըստ իրաւանց հաւասար են, քանի որ հաւասարութեան պարտաւորութիւնն երկուքին համար համազօր է, ի՞նչ իրաւամբ պիտի արդիլուի կինն ընելու ինչ որ այրն կ'ընէ անարգել։ Օրէնքն առաջինը կ'պատժէ երբ բռնուի, և սակայն անհաւասարիմ կինը չբռնուելու միջոցը կ'գտնէ, երկրորդն անպատիժ կ'ձգէ, և միշտ անհաւասարիմ այրն սանձարձակ կ'գործէ։ Ուստի երբ օրէնքն անբարոյական է, 'ի հարկէ սնունդ կ'տայ այդ մոլութեան որ օր ըստ օրէ կ'ճարակի մեր մէջ և ընտանեկան կենաց հիմը կ'խախտէ, տեսակ մը բաղմակնութիւն կ'հաստատէ, զոր քրիստոնէական կրօնը կ'դատապարտէ, բայց քրիստոնէից այժմեան վատ բարքը կ'ընդունի չուելեայն։

Ահրէնս՝ ամուսնական կենաց ղոյութեան և պահպանութեան համար պէտք եղած պայմաններու վրայ խօսելու առթիւ՝ կ'ըսէ։

«Որովհետև ամուսնական միութիւնը միւս ընկերութիւններին կը գնահատի այր ու կնոջ անձնականութեան պատկանելով, միոյն պարտուած անձնուիրութիւնը միւսին համար չներեր որ սոյն սիրակցութեան մէջ բաժանում մնայ։ Ուստի կ'հետևի որ զուտ փէոդ-ալական ամուսնութիւն մ'է։ Ամուսնութիւնն այր ու կնոջ փոխադարձ կայացութեան մէջ հաւասարութիւն կ'պահանջէ, քանի որ երիցս անձերու սերտ միութեան, մտքի և սիրոյ համաձայնութեան վրայ հաստատուած է։ Սիրոյ բաժանումը՝ թէ էրկան և թէ կնկան կողմէ պատահի, անհաւասարութիւն յառաջ կ'բերէ և ընտանեաց մէջ մտերմութիւնն ու վստահութիւնը կ'խանգարէ։ Հետևապէս բազմակնութիւնն հակառակ է ամուսնութեան էական պայմաններուն, և օրէնքը զայն արգիլել պէտք է։

Նոյնը կրնանք ըսել նաև ուրիշ կերպ, չէ թէ միայն այլ անցաւոր բազմակնութեան մը վրայ, որ շնութեան կերպարանքով կ'երևի։ Այս երկրի գործեր՝ թէ այրն ունէ և թէ կինն՝ բարոյականութեան առջև մի և նոյն ծանրութիւնն ունին և իրաւանց մասին ալ պէտք է որ նոյն արդիւնքն ունենան։ Վասն զի ամուսնական միութեան էական պայմանը կ'եղծեն, այս է այր ու կնոջ հաւասար և փոխադարձ յարակցութիւնը։ Բարոյականութեան և արդարութեան ներհակ պիտի գտնուի օրէնքն որչափ ատեն որ՝ շնութեան հետևանաց նկատմամբ՝ երկու սեռի կայացութիւնը հաւասարութեան մէջ չկնէ։

Այր ու կնոջ մէջ եղած պարտաւորութիւններն չեն ներեր սա հաստատակ բռնութիւն բանեցընել անոնց գործադրութեան համար։ Բուն ամուսնական պարտքէ այր ու կնոջ բոլոր սիրայօժարութեան աղատցոյցերը միայն կրնան լինիլ։ Չկայ բռնութեան իրաւունք մ'որ այս պարտիքը մարդուս բարոյական ընութեան անարժան գործերու վերածէ։

Ամուսնական ընկերութեան գործերու փէոդ-ալիզմն, կամ տանտիրական իշխանութիւնը թէ այր և թէ կնոջ կ'պատկանի։ Ընտանեաց մէջ կնկան կայացութիւնն հաւասար է մարդուն կայացութեան, թէև պաշտօնները տարբեր են։ Զենք կրնար ընդունիլ որ կինն բարոյապէս և արիապէս քան զմարդ ստորին լինի, կամ թէ ենթակայ գտնուի այն բանին զոր այրական իշխանութիւն կ'անուանեն։ Ոմանք ամուսնոյն այս իշխանութիւնն արդարացընելու ելան՝ կնկան կարծեցեալ մտաւոր ստորնութիւնն իբրև ապացոյց մէջ բերելով, և մինչև անգամ բարեգէսներ հաստատել ուզեցին որ կինն ուրիշ բան չէ բայց եթէ կիսկատար մարդ մը։ Բայց այժմեան հոգեբանութիւնն ու բարեգիտութիւնը միասէս

այս վարդապետութիւնը կ'ժխտեն։ Մարդն ու կինն նոյն հիմնական հանգամանքն ունին, միայն ասոնց մէջ այս հանգամանաց յայտարարութեան եղանակին մէջ նշանաւոր տարբերութիւն մը կայ, և այս տարբերութիւնէ կ'ծագին իրենց զէսպ զէս պարտականութեան մէջ։

Մարդս իր մտածմունքն ու զգացմունքն աւելի արտաքին իրերու, գինքն աշխարհիս և մարդկութեան միացընող յարաբերութեանց վրայ կ'ածէ, մինչդեռ կինն իր յօժարութիւններն ու մտածմունքն աւելի ընտանեկան կենաց շրջանին մէջ կ'կեդրոնացընէ։ Մարդուս վրայ վերացականութեան և հանրակալութեան մեծագոյն զօրութիւն մը, դիտութեանց համար աւելի ընդունակութիւն, հասողութեան աւելի ընդարձակ կարողութիւն կ'տեսնուին, իսկ կնկան վրայ աւելի զօրաւոր են մասնաւոր և անձնական յարաբերութիւններ ըմբռնելու զգացումն ու կարողութիւնը։ Եթէ մարդն՝ իր իմացական ժրութեամբն աւելի գիտուն է, կինն՝ իր սիրաւէտ կամ համակիր ժրութեամբն էապէս աւելի ճարտար է։ Ուստի կ'հետեւի որ ամուսինն՝ արտաքին աշխարհն աւելի լաւ հասկընալով՝ արդարեւ յարաբերութեանց մասին՝ ընտանիքը կ'ներկայացընէ, և թէ՝ մասնաւորի կնկան կ'պատկանի ներքին կամ՝ գործերու խնամակալութիւնը։ Սակայն սիրաց չէ կնոջ կեանքն ու զարգացումն այս անձուկ շրջանին թողեցընել։ Քանի որ կինն ալ մարդուս պէս նոյն բնութիւնն ունի և էական կարողութիւններու՝ կարող և պարտաւոր է ամէն մարդ կայնի իրաց միջամուտ լինել։ Բայց ընկերական կենաց մասնակից գտնուելու կերպին ու զգաստութիւն ուղղութիւնն իր կնոջին հակումն է, և այս հակումը կ'տանի գինքն զէս՝ ի անհատականութեան և մտերմութեան, մինչդեռ մարդ ներհակ հակում մը կ'զգայ զէս՝ ի հանրայման և տարածութեան։ Ուրեմն պէտք չէ նկատել կինն՝ ընկերական կենաց մէջ այլ և այլ իրաց մասին պարտաւորութիւններ ստանձնելու անկարող էակ մը, քանի որ այսպիսի իրեր ստէպ մարդէն լաւ կրնայ ըմբռնել և գնահատել։ Նոյն իսկ հասարակային կենաց մէջ անկախ կացութիւն վայելող կանայք կարող են ընտրողութեան իրաւանց մասնակից գտնուիլ։

Ամուսնութեան դաշնագիրը չկրնար պարտնակել բնաւ այնպիսի այսման մ'որով ամուսիններէն մին ամուսնութեան բնութեան ներհակ ստրոտութիւն մ'իրեն վերապահէ կամ՝ ընկերակցութեան էական պայմաններէն մին զանց ընէ։

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱ վերսին յուզման մէջ է։ Հասարակապետութեան հիմնադիր հաստատութիւնը կամ ազգային ժողովին բուծումն, այս է ահա վէճի նիւթը եղող մեծ խնդիրը։ Թէև առաջուոյն դէմ, ինչպէս յայտնի է, բոլոր կղերական, Պօնապարդեան, օրլէանական և Օրլէանեան դասերը հակառակ են, և իրարու հետ ալ անհամաձայն՝ իր բաքանչելի ներքին կառավարական դրութիւնն առաջ քշելու փափաքելով, սակայն այս իրաւ է որ Ֆրանսա հանրավարական սկզբանց գործադրութեան մասին կարևոր քայլեր առնելու վրայ կ'երևի, և արդէն ազգային ժողովին ձախակողմեան մասունքն՝ թէև աղատական սկզբանց մասին քիչ շատ տարաձայն՝ համամիտ են երկրին հաստատ կայան մը տալու։ Ուստի այս անգամ ձախ կեդրոնն, չափաւոր հասարակապետական դասը, Պ. Թիէրի քաղաքականութեան պաշտպանը, կառավարութեան հիմնական ձև մը տալու համար, Պ. Ֆ. Բէրիէի միջոցաւ իր ծրագիրը կ'առաջարկէ։ Այս ծրագիրն՝ միապետութիւն հաստատելու համար երկու տարիէ 'ի վեր եղած ապարդիւն փորձերն ու նպերելի զատելը նշանակելէն և բոլոր ազէտից պատճառն այս տարատեսակ և անատոյգ վիճակին վերադրելէն ետև՝ հասարակապետութիւնը փրկութեան միակ միջոց կ'առաջարկէ, Մաք–Մահոնի եօթնամեայ նախագահութեամբ, և չէ թէ՝ ոմանց ուզածին պէս՝ եօթնամեայ անուանական հասարակապետութիւն մը։ Այս առաջարկութեան դէմ աջակողմեանք փոթորիկ կ'հանեն, ամէն ճիգ կ'թափեն ձախակողմեան ճիգերու մէջ երկպառակութիւն ձգել, և 'ի վերջ. նոր ծրագիր մը կ'առաջարկեն՝ արդէն Պ. Պրոկլիի առաջարկածին իմաստով, այս է եօթնամեայ նախագահութիւն՝ վերին ժողովով մը, բայց Պ. Ֆ. Բէրիէ, Լասալէյ, Լ. Սէյ միապետական կուսակցութեանց բոլոր առարկութիւնները ջրելով կ'յաջողին ժողովին մեծամասնութիւնը՝ այս է 345 քուէ 341 քուէի դէմ շահիլ իրենց ծրագրին սահմանադրականութեան վրայ և խնդիրն Երէանէց մասնաճիւղին նկատողութեան յանձնելաւ, այնպէս որ հասարակապետականք մեծ յաղթանակ մը կ'տանին և կերպով մը Պ. Կանպէդայի վրէժն ալ կ'լուծուի, Կանպէդա՝ այս զօրաւոր դլուխն ու անվեհեր ոգին որ իր խօսքովն աւելի նպաստեց ժողովրդեան աչքը բանալու իր ճշմարիտ շահուց վրայ քան թէ յեղափոխութիւնները։

Կանոնիզա՝ որ՝ քանի մը Պոնարարդեան գաղափիրներու դիմակը վար առնելուն համար ազգային ժողովին մէջ, զոր ըսը վարձկան զօրականի մը յարձակմանց ենթակայ դտնուած և հարստահարիչը դրեթէ անպատիժ մնացած էր՝ ի Ընդհանս Դափոլէօնի կուսակցութեան պաշտպան նախագահին և իր զինուորական պաշտօնէից, որ չեն մասնակցիր ժողովին վէճերուն և թերևս հետուէն կ՚սպասեն այն օրուան երբ սուրը պատնէշէն հանելով հաստատելիք հասարակապետութիւնը սպաննելու համար առպարեզ ելլեն։ Իսկ Շանպօր կոմսը նորէն յայտարարութիւն մը կ՚նետէ Գրանսայի և Լիքնալովբոսա երևոյթին համեղութիւնը իր օրն անցած է, կ՚ջանայ համոզել որ Գրանսա միայն միապետութեամբ կարող է փրկուիլ, թէ ինք բռնաւոր չպիտի լինի, թէ սահմանադրական օրինաց բարեկամ է և այլն, միայն այս ապամ Ֆերմակ գրոշակի խօսքը չըներ, անով սեբերես ելնելուն համար՝ նոյն իսկ իր ջերմ՝ կուսակիցներուն առջև։ Գիտ. անցած օր լրագիրները կ՚հրատարակէին թէ՝ ԳԵՔՄԱՆԻՈՅ մեծ մարդը՝ քաղաքական գործերէ հեռու՝ իր առողջութեան հոգը միայն պիտի տանի, և ահա այս օրերս Էնդրէքանդանա Գազէթ օրագիրը կ՚գրէ թէ Պիսմարգ իշխանն երբեք նշանաւոր գրութիւն երկներ է պետութեան գործոց վարչութեան համար։ Առաջինն՝ որ Գերմանիոյ ազգային կուսակցութեան վավերագրն է՝ իրրև սահմանադրական միութեան անհրաժեշտ լրումն, կ՚կայանայ պետութեան պաշտօնէից հաստատութեան մէջ, որոյ իրաքանչիւրն իր յատուկ պաշտօնին և միահամուռ ընդհանուր քաղաքականութեան պատասխանատու մնան՝ Կայսեր և կենդրոնական ընդհանուր ժողովին առջև։ Դիւրին է մտաբերել որ դաշնակից կառավարութիւնները և մանաւանդ ատոնց ամենէն կարևորներն, ինչպէս Պավիերա և Սաքսոնիա կ՚երկնչին որ այս գրութեամբ մասնաւոր տէրութեանց իշխանութիւնը չանհետի և Դաշնակցական Խորհուրդն ալ տեսակ մը ծերակոյտ չդառնայ։ Երկրորդ գրութեամբ՝ այս Դաշնակցական Խորհուրդն լիազօր իշխանութիւններ պիտի ստանայ։ Այս Խորհուրդն որ այլ և այլ գերմանական պետութիւնները (etats) կ՚ներկայացընէ, հանրական գործոց տեսչութիւնը ստանձնած է։ Պիսմարգի նպատակը պիտի՞ լինի անոր իշխանութիւնն ընդարձակել՝ անոր մէջ կամ իր հրամանին ներքև մնայուն խորհուրդներ հաստատել՝ որոց պաշտօնը պիտի լինի օրէնք պատրաստել և գործադրել։ Երրորդ գրութիւնն արդէն գործադրութեան սկզբնաւորութիւն մ՚ըրած է պետութեան երկաթուղեաց կեդրոնական հսկողդիւանի մը կազմութեամբ։ Այս գրութեան նպատակն

է մէկ երկու դիւանները հաստատել, որոնք դիւանագետին պիտի օգնեն հանրական շահուց տնօրէնութեան մասին, և որոց գլխաւորներն անանուն պաշտօնեաներ պիտի լինին, առանց պատասխանատուութեան կամ միայն Պիսմարքին համարատու։ Այս երեք գրութիւններէն վերջինը յաջողութիւն գտնելուն աւելի հաւանականութիւն կ'երևի, կ'յաւելու վերոյիշեալ լրագիրը։ ԱՆԳԼԻՈՑ խորհրդարանն աւելի ներքին խնդիրներով կ'զբաղի քան թէ արտաքին քաղաքականութեամբ։ Եկեղեցւոյ խնդիրն ամէն կրօնական դասերը կ'յուզէ. Գէնթբրիի Եպիսկոպոսին առաջարկութիւնը բարձր խորհրդարանին մէջ՝ Անգլիական եկեղեցւոյ պաշտաման կարգադրութեան համար՝ մեծ յուզմունք զրգռած է ժողովրդեան մէջ և նշանաւոր քարոզիչներ կ'որոտան անոր դէմ որպէս թէ պապական գրութիւնն հետզհետէ մուտ կ'գտնէ երկրին մէջ։ Իրլանդայի տեղական խորհրդարան (home-rule) մը տալու առաջարկութիւնը կ'մերժուի իբրև Սահմանադրութեան և ազգային միութեան հակառակ։ ՍՊԱՆԻՈՑ գործերը վերսին ծանր կերպարան մ'առին։ Գօնչա մարաջախան որ Էսգէլլա քաղաքը զարնելու կ'պատրաստուէր՝ ընկրկող զօրաբաժին մ'ընդ առաջ մղելու ատեն՝ թշնամոյն գնտակին կ'հանդիպի և կարեվէր վիրաւորուելով կ'մեռնի։ Այս կորուստը վհատութիւն հասարակապետական զօրաց և խնդութիւն կ'բերէ Գարլոսեանց որ իրենց գիրքը հետզհետէ զօրացընելով Պիլպաօ քաղքին վրայ կ'քալեն պաշարելու և Սանդանդէրի կ'սպառնան։ Գօնչայի կ'յաջորդէ՝ պատերազմի պաշտօնեայ Զատալլա զօրագլուխն՝ որ կ'պատրաստուի Գարլոսեանց մեծ հարուած մը տալ, մինչ դեռ ատենը ալ վստահ կ'երևի նոյնը տալ հասարակապետութեան և Սպանիոյ գահը վերականգնել։ Միւս կողմէն Ամերիկայի ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳԱՑ Նախագահն՝ Վէրթինոսի Գուատալայի կառավարութեան կողմէ բռնուած և Նիւ-Եօրք վերադառնալու ատեն ընկղմած նաւուն համար փոխարինութիւն մը կ'պահանջէ, կ'ըսեն լրագիրները, Սպանիոյ կառավարութենէ, և այս ալ իր դեսպանը վերկոչեր է Ուաշինկթընէն։ ԻՏԱԼԻՈՑ թագաւորն այնքան ուշադրութիւն չդրաւեր որչափ Ս. Պապը, որ՝ թէև տկար՝ միշտ կ'աշխատի, պատարագ կ'ընէ, ուխտաւորներ կ'ընդունի, նոյն իսկ Ամերիկայէն յատկապէս եկող հարիւրաւոր ուխտաւորներ, որ ճոխ ընծաներ կ'նուիրեն Ծերունիին։ Ինքն ալ իր օրհնութիւնը տալով անոնց՝ Ամերիկայի բողոքական կառավարութենէ իր դոհութիւնը կ'յայտնէ։ Պէլժիոյ մէջ՝ Ռուսիոյ կառավարութեան առաջարկութեամբ կազմուելիք միջազգային դեսպանաժո-

ղեմն և Պասլին բանտէն եկած յարդն խօսակցութեան և առևտրի նշանաւոր նիւթեր են։ Լրագրի մը գրածին նայելով՝ յարդը Պէլժիայի մէջ ղոյժեր է։ ՅԱՆՁՎԷՐ մարապետներն իրեն մասունք կ'պահեն յարդի փտնջեր մանր թաղարներու մէջ, և քահանայ մ'իր քարոզին մէջ ղոյժեր է այս օրերս. «Ինչպէս կարող ենք տարակուսիլ մեր խմացած անիրաւութեանց վրայ երբոր կ'տեսնենք մեր աչքը այն յարդն որու վրայ Պասլն իր շղթաները դրած է։» Բոլոր ժողովուրդը սկսաւ լալ, ողբալ և Նոյեմբեր յարդէն դնել։ Կէնդի մէջ լուսանկարներ կ'ծախեն որ Պասլն երկաթէ վանդակի մէջ կ'ներկայացնեն, իտալացի պահնորդ մ'անոր առջև կեցած։ Այս յարդոյն մասունքէն գոյացած արդեանց կէսը Ս. Պասլին կ'ղրկուի։ Ահա այսպէս պապական կղերը հոգի և սատկ շահելու ճամբան գիտէ։ Անկրիզ օրիորդներն ալ, որոց շատերը հազիւ ուրեմն օրական պարկն ճարելու կարող են, 3 հազար ոսկի հանդանակելով ազքատ կալանաւորին նուիրեր են։ Եւ սակայն կ'հաստատեն որ Եւրոպա լուսաւորութեան կեդրոնն է . . . ։ ԹՈՒՐՔԻՈՅ ընելիք փոխադարձութիւնն անյաջող եղաւ մը կ'ունենայ՝ պայմաններուն ծանրութեան համար, և Վ. Սատրդ փաշան Ն. Պօլիս կ'վերադառնայ ձեռնունայն։ Սակայն Բ. Դուռն պայմանեալ ժամանակին արժէքներուն տոկոսները վճարելու համար արդէն պէտք եղած միջոցները կ'հոգայ որպէս զի տերութեան վարկին վնաս մը չպատահի։ Կառավարութեան և մանաւանդ ձեռնտուութեան շնորհիւ Փոքր Ասիոյ սովը գրեթէ դադրած է և յուսալի է որ ապագային մէջ սովի առաջն առնելու համար՝ ի գործ կ'դրուին այն ամէն պայմաններն որ կարող են հաղորդակցութեան միջոցները բազմացնել և երկրին վաճառականութեան նոր դրդիռ մը տալ։ Վ. Հ. Սուլթանն ինքնագիր նամակով Բ. Խրտիվը մայրաքաղաքը կ'հրաւիրէ՝ անոր անկեղծութենէ և ջերմեռանդն պաշտօնասիրութենէ իր գոհունակութիւնը յայտնելով։ Եւ իրօք Բ. Խրտիվն օտար տերութեանց հետ՝ Բ. Դրան հրամանաւ՝ առևտրական դաշնադրութիւններ ընելով՝ իր հաստատամութիւնը կ'ցուցնէ, մինչդեռ Դանուպեան հարկատու դատաւորներն ինքնուրոյն առևտրական դաշներ կնքելու կ'ելնեն՝ առանց Վ. Հասպետին հաւանութեան գիտցուելու, և բարձրագոչ կ'պնդեն թէ իրաւունք ունին դրացի ժողովրդոց հետ դաշնադրել՝ իրենց անկախ իշխանութիւններ։ Այս նպատակաւ Թումանիոյ կառավարութիւնն բանակցելու սկսած է օտար տերութեանց հետ և Բ. Դրան դժգոհութիւնը կ'դրդռէ, քանի որ սա չճանչնար անոր այս իրաւունքը։

ԱՄՈՒՐԻԻ ՄԸ ԵՐԱԶՆԵՐԸ

Գորգիդ վրայ արևուն ձգած մէկ ստուերն, կամ լուսոյ շառաւիղ մը վարի տափարակ յարկին վրայ, կամ կրակիդ վառիլն ախորժելի ժամանակահներ են, միշտ ներկայ, միշտ ընկերակից և միշտ սա աղղարարութիւնն ընող. — Ժամանակը կ'անցնի:

Ամառնային եղանակի մէջ իմ ընթերցումս և գիշերային հսկումս նոյն իսկ վառ մոմի մը միջոցաւ չափած եմ, և իմ փոքրիկ պրնձէ աշտանակիս Ճարմանդին վրայ Նոր Կտակարանին սա իմաստալից խօսքը փորագրած եմ. Գիշերը կ'հասնի:

Բայց պէտք է իմ Երգովս դառնամ: Անձրևային գիշեր մ'էր, ցերեկը շատ աշխատեր էի, կօշիկներս հաներ, ոտքս հողաթափներ հագեր էի, վրաս տաճկի թոյլ զգեստ մը նետեր և գլուխս յունական գդակ մը դրեր էի — ուրիշ ժամանակի և տեղի յիշատակներ — և նստած կ'դիտէի կպրային բոցին վաւելուն, անորոշ և դեղնորակ ելևէջը:

Ա.

ԾՈՎՈՒ ԱԾՈՒԽ

Այս բոցը պչրողի կ'նմանի, կ'ըսէի մտովին — որ կայտառ, երեքուն, գունաւոր է, որ այսր անդր կ'ծածանի, որ ածուխն անկերպարան սև զանգուածով մը կ'ծածկէ, որ խօլ, աղտեղի մուխ մը կ'հանէ, և հոծ, անպէտ մրուր մը կ'ձգէ: Բայց և այնպէս զուարթաղին կ'շողայ, կ'խայտայ, սիրուն կ'ծփայ և այծեմնկի պէս մէկ տեղէն ուրիշ տեղ մը կ'ոստոստէ:

Ինչպէս պչրողի նման: Եւ սակայն աղջկութեան այս թռուցիկ հաճոյքն, որու կ'նմանցնեմ իմ ծովու ածուխիս բոցը, միթէ կենաց բնիկ մէկ խաղը չէ՞, և բնապէս կենաց մանկային ժամանակին յատուկ: Միթէ աւելի ծանր և Ճշմարիտ կրից էական մէկ կայծը չէ՞ այն, մանաւանդ որ սպասուհիս Աննան նախ կակուղ ածուխը կ'դնէ որպէս զի հանքայինն լաւ բռնկցընէ: Միթէ նորածին շողիներու կարևոր մէկ սպառումը չէ՞, շողիներ որ հոգւոյ մէջ կ'ծփան և որ այնուհետև աւելի մաքուր կ'մնան: Միթէ ամէն մարդու երիտասարդու-

թեան մէկ ժամանակն՝ այսպէս սրտի երերուն, թայլ նշոյլմը չ՚երևիր, որ նշանակութիւն չունի, այլ սակայն պէտք է որ պատահի։

Լամարդին աղուոր կ՚ըսէ տեղ մը՝ թէ նորատունկ ծառի մը մէջ աւելի առոյգ հիւթ և ծփին ստուեր կայ, բայց աւելի հուր կայ հին և հուժկու կաղնիի մը մէջ։

Արդեօք Լամարդին բառերով կ՚ուզէ խաղալ, միթէ իր քերթողական ոգւով կ՚ուզէ զինիլ և ամբաստան Կրազիէլայի մը ուրուականին դէմ ինքզինքը պաշտպանել, կամ՝ ճշմարիտ է այս ըսածը։

Մարդ մ՚որ վաթսուն տարեկան է, թէ այրի լինի և թէ ամուրի, կարող է այսպիսի զգացում մը դրի առնուլ, իր աւերուն սիրանյուսով կ՚տածէ, երիտասարդութեան խանդը կ՚նորոգէ զուարճալի երկդիմութեամբ և չքնաղ սնձնապատանութեամբ։ Բայց վերջապէս, ստոյգ է։ Միթէ սիրան նորաբողբոջ առնկ չէ՞, որու առաջին ծաղիկները կէս մը բուսած են, թերևս միակողմանի են, բայց քիչ քիչ՝ երբ հասունցան, լիովին կ՚բացուին և իրենց թերթերն ընդ երկար կ՚պահեն արիութեամբ։

Պուլվը՝ Գաւոդէնէրու պատմութեան մէջ՝ սրտի առաջին թռիչքն իբրև լոկ մտածին խորհուրդներ նկատեց, սիրոյ հետ իբրև զգուանք սեպեց։ Շատ ընթերցողներ Դրէվանիսնի և Պիսսիդրատոսի պատմութիւնը կարդացած են։ Բայց Պուլվը հիմակ հինցած է, իր սրտի կեանքն բոլորովին ապառաջ է։ Այսպիսի մարդ մը կարող է ապահովութեամբ ծաղրել ապագայ տարիներու ցուրտ դատաստանն։

Իսկ Շէքսբիր ոչ կ՚գնէ տհաս սրտի ժամանակը. փառասիրութենէ առաջ, որ միայն դիւցազնի հոգի կ՚վերաշինէ. Շէքսբիրի մարդն էջ՚ՀՆՈՑ կ՚հառաչէ, ՔՈՃՈՃԱՐ համբաւը ստանալու համար՝ դեռ ևս թեւը չերկնցուցած։

Սակայն Շէքսբիր հասուն և հասած սիրոյ հոգի մը չափեց, առանց Տեղուէմոնայի և Օթէլլօի բոցավառ հառաչներ տալու։ Կորդէլիա, որ իր յօրինած թատերգութեանցը մէջ ամենէն անուշն է, կ՚սիրէ առանց ցոյց տալու այն փրփրուն ոգին որ ծուլիէտին տաղարակի սէրը կ՚կազմէ։

Եւ Գլօրիկէլ, Վէնդրս դէլլն (ձմեռուան վէպ) մէջ Բէրդիդային կ՚ըսէ, զգայուն սրտի մը ճշմարիտ շեշտով —

Եմ փափաքս
Պատուէս առաջ չեն վազեր եւ ոչ իրօս,
Աւելի սաստիկ չեն վառիր քան հաւատս։

Իսկ Հեկտորի և Անտրոմակի սէրն ի՞նչպէս է։ Ծովու ածուխի բոց չէ, այլ հաստատուն, համբերատար, անսպառ բոց մը. սրտի ամոլք, յարգանօք և լաւագոյն սիրուվ լի — բարեմոյն, ուղիղ և անթերի սէր մը։

Այժմ Ադամայ ու Եւայի դարձիր, որ Աստուծոյ առջև են, Միլտոն ալ իբրև հանդիսագիր։ Քաղենք այս վաւերուն բոցով, Կոբոնեալ դրախտէն դոհար մը։ Արի՛ առանձին մրմնջենք — ինչ որ Ռաֆայէլ Ադամայ կ'երգէ — դասական երգ մը.

Ծառայէ՛ անոր եւ վայելի՛ր
Միւս արարածներն Այն ինչպէս որ կամի
Թող բնակեցընէ, բայց զոհացի՛ր
Քեզի տուած բաներէն, այսինքն այս դրախտն
Եւ քու գեղանի Եւադ։

Եւ դարձեալ.

Սէրը կ'զտէ,
Ճորհուրդներն եւ սիրտը կ'ընդլայնէ, իր աթոռն
Գանականութեան մէջ ունի, եւ հնարագէտ է այն.
Սանդուղն ունի որով երկնային սիրոյ կրնաս հասնիլ։

Այս սիրոյ մէջերերուն բոցը չկայ բնաւ, որ ծովու ածուխիս բոցին նմանի, որ այժմ կ'խաղայ, ծղրդի պէս վառ վառուն։ Բայց իմ վերնայարկիս սենեակը գիտելուս, չեմ տեսներ Ռաֆայէլ հրեշտակապետին նման բան մը, և ոչ ալ՝ գեղանի Եւադ։

Ծովու ածուխին բոցին վրայ տեսակ մը տամկութիւն կայ զոր՝ թէև ամէն խելքս կ'թափեմ, անկարելի կ'գտնեմ յարմարցընելու երեբուն, շողուն սրտի մ'որ կրակս ինձ կ'ներշնչէ։ Տամուկ սիրտ մ'անտարակոյս յիմար բան մը պիտի լինի։ Բայց ով լսած ունի այդպիսի բան մը։

Վ. Օրթսվօրտ իր Արշաւան գրքին մէջ կ'ըսէ.

Առաջ բարին կ'մեռնի
Եւ անոնք որոց սիրտերն ամառուան փոշիին պէս չոր են՝
Մինչեւ փոդակը կ'վառին։

Բայց ի՞նչ է չոր սիրտ մը։ Դիւրին է ըմբռնել թէ ի՞նչ է փոշոտ սիրտ մը. ամուրիի մը սիրտը հարկաւ քիչ մը փոշոտ պիտի լինի, երբ վաթսունը կ'կոխէ, երբ չորս կողմէն ոստայներ կ'կախուին, և Ագահութեան ու Ինքնասիրութեան անուամբ սպիտակ մամուկներ կ'հսկեն և Հեշտամոլութեան նման կապոյտ Ճանճեր որոտալու կ'աշխատին։

Իմ աթոռիս թեերը պինդ բռնելով ասի. «Երբէք ամուրի չպիտի մնամ մինչև վաթսուն, երբէք, և այս ստոյգ է որչափ ստոյգ է թէ յոյս կայ մարդու մէջ, կամ գութ կնկան, կամ հաւատ երկրագունոյ մէջ։

Այս մտածութեամբ սիրտս զուարթագին փայլատակելով խայտաց, ծովու ածուխին բոցին նման, որ վեր կ'ելնէ կ'պատէ շուրջ հին և փոփոխիլատակներ, և աչքիս ներկայացողնկարներ, որ անոնց փարելու փորձ կ'փորձէ, և այն ինչ կ'յարի որ վերստին կ'թռի, խնդագին կ'թափուի. այս է սրտի փայլակներու շարք մը, որ կ'շողան ու կ'մարին։

Եւ մտածեցի, միթէ այս աշխարհիս մէկ մասն այսպէս վառվռուն կայծեր արձակելով չշողար, ասա անդ երերալով քանի հովի յորձանքը զանոնք կ'հրահրէ։

Օրինակի համար, առ քու ղայսուն սիրտդ, տկար, ջերմ, ժիր սիրտ մը, որ աղէտալի ազդեցութենէ հազիւ կ'ազատի, որու առաջնորդը խոհեմութիւնը չէ և թերևս առաքինութիւնը։ Մաքէնզի դրուած մ'ունի որու մէջ ուժգին երևան կ'հանէ այս չարաշուք ղայնութիւնը։

Մարդ որչափ սոյն ղայնութեան հպատակի, նոյնչափ ղօրաւոր և պարտաւորիչ կ'դառնայ անոր սովորութիւնը։ Հէք Մաքէնզին այսպէս տառապած պիտի լինի, չես կարող իր դիրքը կարդալ առանց այս բանս ղդալու. աչքդ ակամայ անոր դիւրազդած վշտաց կ'հետևի, մինչդեռ դրեթէ կ'պատկառիս տեսնելով անոր յաջողութիւնն նկարագիրներ յօրինելու մասին։ Սոսկալի ժառանգութիւն մ'է այս, զոր զօրաւոր մարդ մը կամ կին մը զսպելու պիտի գան դարձէ, ծովու ածուխի կայծ մ'է, որու հետևանքը վատ է։ Աշխարհ ըստ մեծի մասին կարծր և հրանուտ նիւթէ շինուած է, որոց դէմ զարնուելով քու լաւագոյն և սրբազոյն խորհուրդներդ կրակ կրնան հանել — ղայշ եղիր որ կայծերը քեզ չայրեն։

Բայց ի՞նչ բարեբաղդ և անհոգ կեանք է ամուրիինն, որ աջ ու ահեակ կրնայ զարնել աներկիւղ։ Սիրտդ ուրիշ սրտի մը հետ կապուած չէ, որ կրնայ ղայման վատ շողիներով լեցուն լինիլ, և ոչ մեռաքսէ մարմնոյ ներքև պաղ սրտի մը մէջ սառած է, որ միայն ղորմելոյ անունը գիտէ, և անոր վրայ կ'բարբանջէ. սրտակցութիւն ինչ է չգիտէ, այլ միայն անմիտ խոստովանութիւն մը։ Եւ եթէ քու ղայցութիւններդ անմտադիր բացատրութեան ատեն՝ փոխարէն անհամ և անլի խօսքեր լսես, հաւատի եղիր՞ որ այլուր Աշմարիտ սրտի մ'անկեղծ ձայնը պիտի լսես։ Այս ձայնն հոգւոյդ մէջ պիտի դղուես, և նոր նոր ղայ-

ցումներու վաւարանը պիտի դառնայ, իսկ միւսը գլանկիպ մէկ փչու�մովը պիտի անցնի։

Կամ թէ զգայումներդ ընդհարին, վիրաւորին, ոմ է իմաստունն կամ յիմարը, բայց եթէ դու միայն։ Եւ միթէ քու սրտիդ թելը ձեռքդ չէ, և զայն չէս կարող ըստ հաճոյս կապել կամ քակել։ Ջնջէ զայն, հիւսէ զայն, կամ պատառէ զայն քու կրակիդ լուսովը, և լաւագոյն համարած կերպովդ։ Տկար է այն մարդն որ չէ կարող իր զգացման թելերն, որքան նուրբ, որքան խառն, որքան ձկտեալ, կամ որքան զօրաւոր լինին հիւսելու և կապելու, Բանականութեան պարանին, որով իր գործունեայ կենայ խարսխած կ'մնայ։

Ընթերցումն ազդու և շահաւէտ օգնական մ'է որով զգայնութեամբ փայլուն սրտի մը կենդանի հանգոյցներն և այլանդակցնորքը կ'լուծուին, բայց այս ընթերցման զգուշաւոր ուղղութիւն մը տալ պէտք է։ Ան ծերունի ու անկեղծ Պրդրին, երբ կ'զգաս որ հոգիդ տկար է և կենաց աղէտքը դժուարաւ կ'կրէ, ահա Քաւրը, երբ միտքդ բարեմտին, տխրալին և կրօնական խորհրդածութեան ենթակայ է, ահա Կրապ, երբ կ'ուզես փոքր ինչ ներկայ հետաքրքրաշարժ իրողութիւններով անուրջդ թոթուել, ահա Վօլդէր, նոյնաբոյժ բժիշկ մը, զոր կրնաս կարդալ երբ կեանքն իբրև խաղ նկատել, բնութեան կատակներ ուղղել և ձակատագրին հետ զուարճաբանել ուզես. ահա Ռուսօ, երբ անջնական աշխարհ մը վերանալ, և հոգւոյ երաժշտութեամբ և մշակութեամբ ինքզինքդ պատրել ուզես։

Եւ երբ այս մէկդի թողուս, և աշխարհային տաժանելի յաջողութեան համար մարանչաղներու մէջ կորուսեալդ ինքդ լինիլ ուզես, եթէ կանխաւ կ'ուզես գիտնալ թէ ուր են այն ժայռերն որոց դէմ անաարակոյս պիտի փշրուիս, Պօլինպրոք կարդա, աչքէ անցուր Լիպլէրնի նամակներն, կարդա՝ և Ռուշֆուքոյի ճարճատուն տողերուն մէջ կարդացածդ որոնայ։ Իր խայթիչ խօսքով ինչ իմաստներ կ'ամփոփէ, ինչպէս ջիլերուն մէջ նշարակը կ'մղէ, և սակայն բնաւ չվիրաւորեր, վասն զի անկենդան նիւթեր կ'յօշատէ։

Եթէ զուարթ և անհոգ ժամդ է, ոմ կարող է զգացումդ և բնութիւնդ ամրել քան թէ Սգէրնի և Գիլլոտինի պէս բարեսիրտ ընկերներ։

Դարձեալ Միլտօնն ու Եսային ունինք, որ մարդուս հոգին կ'բարձրացընեն մինչև ամպերն, և անոնց առաջնորդութեամբ թեթեւսան կը վերանաս մինչև երկնից դռները։

Բայց այս ցոլացիկ զգայնութիւնն յատապար, կամ վշտահար կամ աղքատ մարդու մը համար՝ շատ ահռելի է։ Այն հոգին՝ որ խիստ ընտիր և ուժգին ամրապնդած է, չես կարող կորզել առանց աղէտից։ Ինչպէս կ'շրանու, վիրաւոր աղեկի մը պէս, ամէն զգեհիկ, դաժան և կոշտ բաներէ։ Վայ այնպիսի մարդու մը, սկիզբէն ցվերջ պիտի ապտակի, իր կեանքը նեղութեանց ծով պիտի դառնայ։ Իբրև զոհ իր սուր զգայողութեան՝ իր առջև կեցած կասկածանաց մեծ վհանով մը կ'թափառի. այնպէս որ ոչ ոք, նոյն իսկ բարեկամները, չեն կարող նշմարել իր բնիկ բարեսէր հանդամանքը։ Աղքատութիւնը՝ եթէ վրայ հասնի, դաղտուկ անոր դէմ կ'մաքառի ուժգին և անդուլ։ Յրամէն ինքզինքը պահպանելու համար աղքատին լաթերովը կ'փաթթուի, և այնպէս կ'ակնարկէ աշխարհին որպէս թէ բոլոր մարդիկ իրեն դէմ լիաբերան սառնաշունչ հովեր կ'փչեն։ Քաղքին բազմամարդ փողոցներէն կ'Հեմ նա, իր տառապանօք հպարտ, իր տկարութեամբը մնայարծ, և բարիք ընելու համար կայ չառնլով։ Այս զգայումը կնկան մը վրայ, Պուլլը նկարագրած է իր Նէ- Դէմն գործին մէջ Բօրին կծու ոճովը։

Որ վրէժխնդիր հպարտութիւնն, կերպ մը յիմարութիւն դարձած,
Որը փարէր նէ իր աղէտից, եւ իր վիշտն էր իր աթոռ։

Պաղ պատերը, սակայն սիրոն անոր ներքև կ'շողար, լիմ ծովու ածուխիս պէս, որ վեր կ'ելնէ, կ'բունկի, կ'վառի և կ'մարի անոնպատակ, թողլով միայն թեթև տաքութիւն մ'որ իր մէջ կ'սկսի ու կ'դադրի։

Այս նուրբ զգայնութիւններն, միշտ ժիր, անդուլ կ'որոնեն և կը դիտեն ամէն բան. ասոնք իմաստ կ'տան ամէն բանի որմէ անհոգն ու անզգան անտես կ'անցնին, ըստ որում անյայտ է։ Մարդոց բազմազան կարծեաց մասին կ'խաբուին, հաւատոյ նշաններ կ'տեսնեն ուր որ այլք ոչ ինչ չեն տեսներ։ Այս փափուկ կազմուածքը մարդուս համար տանջանք մ'է, և սակայն, յիմարը չէ կարող անոր դարմանը գտնել. իր վշտաց վրայ կ'զարմանայ և երբէք անոնց աղբիւրը փնտռելու հոգ չէ ըրած։ Կ'ուտէ նա վնասող տերևներն և երբէք չքաղեր բոյժ տուող արմատը։

Իսկ կնկան նկատմամբ այս բանս աւելի ծանր է. իր նուրբ դիւրազգածութիւնն վտիտ ծաղկի մը կ'նմանի, որ երկնից ամէն դառնաշունչ հովէն կ'երերի. իր յատուկ փափկութիւնը դինքը կ'վիրաւորէ, իր ամենէն ընտիր շնորհն տանջանք մը կ'դառնայ։

Ահաբեկ միտ կ'դնէ, դողդողալով կ'կարդայ, երկիւղով կ'նայի։ Իր համակրութիւնն Էօլրոսի տաւղին պէս՝ թեթեւազոյն շունչին եղանակ մը կ'ընծայէ։ Իր զգայութեամբը կ'բորբոքի, կ'տատանի ու կ'ընկնի, ծովածուխին բոցին նման։

Երբ այսպիսի զգայուն կին մը սիրէ, իր սէրը հրափայլ, ծփին բոց մ'է, որ յուսով կ'վառի, յոյս մ'որ դոյզն ինչ կիզիչ նիւթ մ'ունի, այնպէս որ իսկոյն կ'սպառի։ Սակայն սաստիկ զգայնութիւնն զինքը պիտի համոզէ որ այն բոցը տակաւին կ'տաչրբէ։ Անփոխարէն իղձի մը ժժղոհութիւնն իբրև սիրոյ խայթոց մը սխալմամբ պիտի նկատէ և պիտի երևակայէ որ տակաւին կ'վառի։ Բաւական խորունկ չքներ և չաեսներ որ սէրը դացած է, և վիրաւոր զգայնութիւնն միայն թոյլ, դժգոյն կայծեր կ'հանէ անոր տեղ. իր զրգռեալ երևակայութիւնն այս կայծերն իբրև ճշմարիտ բոց կ'ներկայացընէն աչացը։

Այս տեսակ կնկան մը համար գաղտնութիւն, խոհեմութիւն և շրջահայեցութիւն պաղ բառեր են, իմաստ մը չունին, միայն թէ այլոց վարմունքին վերաբերող յատկութիւններ են։ Իր յատուկ գործերը բնաւ չդուշակեր, իր զգայուն այնքան բարձր է որ չէ կարող այս տեսակ արդիւնիչ առաջնորդներուն համեմատ վարուիլ։ Պատրանք պէտք են իրեն որ ճշմարտութիւն սորվի, սորվի որ ամէն ինչ որ կը փայլի ոսկի չէ, սորվի որ ամէն ջերմութիւն չբռնկիր . . . . . .։

Իմ կրակս երթալով կ'մարէր և ձողով զայն խառնեցի, իսկոյն բռնկեցաւ և հարիւրաւոր գայրագին բոցեղէն լեզուներ հանեց։

Ճիշտ այսպէս է, մտածեցի, յետին ծայր զգայուն սիրտ մը, որ երբ միանգամ սաստիկ յուզուի, շատ մը բոցանշոյլ զգացումներ կը ժայթքէ, որ ասդին անդին կ'սլանան, կէս մուխ, կէս բոց, սէր և հեռ, թախծութիւն և խնդութիւն, իր յիմարութեամբը վայրենի, և չգիտնալով թէ ուր կ'թռչին իր կայծերը։ Եթէ անդամ մը ուժդին յարձակիս այսպիսի հոգւոյ մը հիմնաւոր կամ մտածին յօժարութեանց վրայ, անմիջապէս խօլական գործոց փոթորիկ մը պիտի տեսնես, հրայլին մրրիկ մը, որ կ'սուլէ և վայրագ հրատներ կ'արձակէ, որ հանդիսատեսներն, նոյն իսկ բարեկամները հեռու կ'վանէ մինչև որ մրրիկն անցնի։

Բայց ասոնք չեն միայն իմ ծովու ածուխս սլաթն բոցին ինձ ներշնչածը։

— Ինչպէս պչրողի մը պէս, մտածեցի վերսին, իմ առջի գաղափարիս դառնալով, այնքան վառվռուն լինի, այլ անսաղդ, այնքան

պայծառ, այլ թեթև։ Քու ճշմարիտ պչրողդ կայծերու հետ կ'խաղայ, իր սիրոն կայծերով կ'սպառի, կայծի հետ կ'չափէ զայն, և սովորութիւնն բնութիւն դառնալով, ուրիշ բան չէ կարող ընել այլ յաբաժամ բոց հատանել։ Ինչպէս խնամոք կ'ծածկէ զայն երբ բոցերն չափէն աւելի տաքութիւն արտադրեն, ինչպէս ճարպիկութեամբ աստ և անդ կ'ցրուէ անոր շողն, ինչպէս զգուշութեամբ զայն կ'նուաճէ, ինչպէս հրապուրիչ կերպով կ'վառէ զայն։

Այս ամէնն իմ փնտռած հոգւոյս ինքնաբուղխ ցոլացումներուն բոլորովին ներհակն է. զգայութիւնն՝ որտի սանձ և որտի խրատ կ'անզոնէ, զգայութիւնը չհարցներ — Ո՞րչափ, այլ միայն Ո՞ւր։

Քու պչրողդ խոտան և անհարթ հոգի մ'ունի, շատ վայելուչ և կիրթ կ'երևի իրաւ, բայց անոր մէջ ազնուութիւն բնաւ չկայ։ Իր բոլոր ընդածին ազնուութիւնն՝ իր կամաց անբնական ճգմամբը խոտան եղած է։ Ճշմարիտ զգացում դուեհիկ սովորոյթ մ'է պչրողին աչքին աններելի. անոր ամենէն լուրջ և ուղիղ յայտարարութիւնն իբրև զգացում կ'նկատէ, սակայն քերթողներէ քաղած զգացումներու սիրուն մէկ թելը պիտի զարնէ նա քու առջև. կ'յարդարէ զանոնք այնպէս ինչպէս կ'յարդարէ Կօպլէնի ջուլհակ մ'իր գեղեցիկ գոյները։ Զմայլելի կերպով կ'ուրուագրէ զանոնք, այլանդակ հականկարներ չկան, այլ երանգներու խիստ ճարտարարուեստ անուշութիւն մը։

Վհուկի մը պէս կ'ժպտի նա, և այս ժպտին կ'ձայնակցի հնչական այնպիսի ծիծաղ որ Կիրկէան պուրակին մէջ հայրենատենչ Ոդիսևսը հմայեց։ Կարմրախայտան որսացող լաւագոյն կարթին պէս ճարտար և դիւթիչ խայծ մ'ունի իր նայուածքը։ Իր բառերը կ'շողան, և թրթռակ լեզուէն կ'հոսին, այլ խմաստի սիրուն երկդիմութիւն մ'ունին։ Կ'կեղծէ նա բնականութիւնը, և կ'անդոմնէ։ Կ'մեղադրէ նա ինքզինքն որ միայն բնութեան թելադրութեան կ'հետևի անկեղծօրէն։ Կ'պարծի իր տուած խրատներուն վրայ, իր հնարպիտութեան տարած յաղթանակներով կ'չափէ իր խելքը, և ինքն իր յատուկ ստաբանութեան վրայ կ'ծիծաղի։ Եւ եթէ գիպուածով իր հոգին — ինչ շատ ուիզ որ անկից մնացած է — կ'գրդէ զինքն ձախողակ վստահութիւն մը ցոյց տալու, իսկոյն կ'դատապարտէ այս ընթացքն որպէս թէ ոճիր մը գործած լինէր։

Միշտ զուարթ է պչրողը, վասն զի խորունկ զգացումներ չունի յուզելու։ Ծանծաղուտ և խճեայ յատակի մը վրայ հոսող առուակը միշտ կ'խոխոջէ։ Թեթևասիրտ է նա, վասն զի իր սիրտը կայծերու

մէջ կ'ծփայ — իմ ծովու ածուխիս կրակին պէս։ Ամուսնութեան կ'յուսայ նա, չէ թէ իբրև սրտի մը սիրոյն և կենաց բոլորագրաւ հոգը, այլ իբրև յաջող, հեշտ և օրինական գաշնագրութիւն մը, որու վրայ կ'ծաղրէ, անկից հեռու կ'դեղերի, և 'ի վերջէ անոր լուծն կ'ընդունի, որպէս զի հին և սիրական անզգայութեան մը շինովի և ծիծաղելի շղթերը ծածկէ։

Պչրողը վշտոք չպիտի մաշի, վասն զի կորուստ մ'իրեն համար նշանակութիւն չունի. ուրիշին անտարբերութեան դէմ չպիտի փրփրի, վասն զի այս իր արուեստն է. նախանձով չպիտի տանջուի, վասն զի սէր ինչ է չգիտէ։ Հոգւոյ զօրութեան և լիութեան վրայ գաղափար մը չունենալով, անոր հաճոյքը գոհ ընելու դժուարութիւն մը չտեսներ։ Զգիտէ թէ ինչ է սարսուռ մը, չէ կարող երևակայել թէ ինչ է կիրքը, անոր համար խնդութիւնն սնուն մ'է, վիշտն ուրիշ անուն մը. և կեանքն իր սիրոյ և գառնութեան անբաւ հոգերով ուրիշ բան չէ, այլ տեսարանի վրայ զաւեշտ մը։

Կարծեմ թէ Տիկին Տիւտվանդն է որ կ'ըսէ գրեթէ այս ըսածիս յարաբերութեամբ. Բո-երը չեն գիտեր այն շա-իղն որմէ աբծի-ներն արևուն կ'դիմեն։

— Նորայր, կ'ըսէի մտքով, կրակիս ոստումներուն նայելով, որս մի եղաւ և յաղթական։ Կորովի և հզօր բնութեան տէր մարդ մ'էր նա. . . : Նորայր կ'ճանչէր աշխարհը, թարմ զգայումներ և մեծ յոյսեր ունէր. միշտ այնպիսի բարեկամներէ շրջապատեալ էր, որ զինքը կը սիրէին և թերևս կ'շողոքորթէին։ Հապա թէ քաղաքի ճնկուոտ կենաց մէջ մտնելով, յանկարծ փայլուն դէմքով և օդային քայլերով աղջկան մը կ'հանդիպէր որ խեղճ Նորայրին սիրտն իրեն անծանօթ զգայումով մը կ'յուզուէր։ Իրեն համար, զգալ գործել էր։ Ինքն անդոսնելի մարդ չէր, վասն զի՝ թէև գաւառային հով մ'ունէր, և ընկերական կենաց պատշաճութեանց մասին անճարակ կ'երևէր, սակայն զօրեղ մարդու մը հոգին, արիութիւնն և տաղանդն ունէր։ Խարուսիկ դէմքեր զանազանելու անգէտ, շողուն սրտի մը անուշ հնարքն իրեն ճշմարիտ այլայլութեանց ընդակից համարեց։

Օրիորդը կ'պարծէր այնպիսի մարդու մը համակրութենէն որ իր դլխուն մէջ ըղեղ ունէր և խեղճ Նորայրը սարկօրէն կ'գրուէր։ Նորայր խորհրդաւոր բարեկամներ չունէր բնաւ, և եթէ ունենար, իր ներքին յուզմունքը զինքն անասան պիտի ընէին։ Ոլիմպիական խաղերուն մէջ չկար աւելի հնարագէտ ախոյեան մը քան Նորայրի սրբակից Երանուհին։ Նորայր հմայուեր, խարուեր և զմայլեր էր։

Երբ Նորայը սիրոյ վրայ խօսէր, օրիորդն իր նենգաւոր սիրուն ակնարկներով կ'պատասխանէր և աւելի ևս զանի կ'ծիւրէր։ Զքնաղագեղ արարած մը, իրաւի, տատրակի պէս անուշ։

Այսպէս շարունակեց, ողբմելի յիմարը, մինչև որ օր մը — նոյն ինքն ըսաւ ինձ այս բանս տաքցած գլխով և բոցավառ աչքք — երբ իր զգացումներն յօժարակամ խոստովաներ, խանդագին տաշտեր պաղատեր է, օրիորդն բարձր ու հեղնալի ծիծաղով մ'իր անուշգարմանքը յայտներ է։

Մարդը կ'սպասէր որ սիրոյ անդուսպ խանդը տեսնէ օրիորդին կողմէ, և ահա անորտեղուրիշ բան չէ պտեր բայց եթէ ծովային ածուխի վաղամեռիկ բոյը։

Մխիթարութեան դիր մը դրեցի անոր, վասն զի մէկ տարիով աւելի մեծ էի անորմէ։ «Սիրելի բարեկամ, ըսի անոր, ժուժկալ եղիր, կարող ես վերի քաղքին շուկան ընդեղէն դտնել։ Ճաշիդ քիչ մը ձուկ կեր, զգուշացիր ըմպելի գործածելէ. կաղամբիդ մէջ շատ կարագ մի դներ. ճերեմի Դէյլերի մէկ քարտը կարդա, և բերնուց թարգմանէ տէն ասացուածները. Մօլիէրի ժօրժ Տանդէնի գողտրիկ նկարագիրն ուշի ուշով կարդա, և՝ Ճշմարիտ վկայ, մէկ շաբաթէն ողջ առողջ մարդ մը պիտի դառնաս։»

Շատ սրտմտած լինելուն պատասխան չդրեց. բայց տասնութ տիս սնցնելէն ետև՝ հաստ, եռաթերթ դիր մը ստացայ, զմուռին վրայ տատրակ մը կար, և բարեկամս կ'իմացընէր ինձ որ թագաւորի մը պէս երջանիկ է։ Ա՛դրէր որ բարեսիրտ, ընտել և սիրող կին մ'առեր էր, որ յունիսի օրուան մը պէս չքնաղ էր, և թէ իրենց եռամեայ մանկիկին արևուն Ճառագայթին պէս պայծառ էր։

Ես մտածեցի. ինչ գողտրիկ, քնքուշ և սիրասուն կին մը կրնայ լինիլ վերջապէս այնպիսի շողուն, վառվռուն պչրող մը, նորաձևութեան ստրուկ մը, իրեն պէս յիսուն հեղգ սրտերու բոժոժը, թատերական տեսարանի մը դերասանուհին, որ մերթ գեղջուկի և մերթ դշխոյի զգեստ կ'հագնի։ Ինչ խնդութիւն կրնայ զգալ պարկեշտ սիրտ մը զանի իր կինն անուանելով, ինչ ծայրագոյն սիրոյ երանութիւն, ինչ երկրային Ճոխ երաշ իրագործելի։

— Վա՛հ, և երկաթէ բահը մղեցի մարող ածուխիս խոտացած կոյտին մէջ։ Ճիշտ այսպէս, այսպէս անարժան է քաղքի պչրողին մոռացած սիրտը. Ճիշտ այսպէս իր կենայ անգուլ կայծը, և յեղյեղուկ կիրքն, ինչ որ ունի առողջ և հրանուտ, կ'հալի ու սև, աղտեղի, տձև դիրտ մը կ'դառնայ։

Երբ պչրողի մը հետ ամուսնանամ, հրէից ձեռքը հին հաղուստներ պիտի դնեմ։

— Սակայն, ըսի մտովին, երբ բոցը վերստին խաղայ, նաղանքի (coquetry) և պչրանքի (flirtation) մէջ խաիր մը կայ։

Նաղուհի մը կայծ կ'հանէ, բայց անպարտ և սիրաւէտ մնայարծութեան կայծն է այս քան թէ հաշուի արդիւնք։ Արեան եռն է այն քան թէ սրտի կամաւոր կատակը։ Ճշմարիտ հոգւոյ մը բոլորտիքը պիտի թեւահարէ այն՝ պտղին շուրջը դարձող շողին նման, նուշն աւելի հասուն և տաք թողլով։

Նաղանքն՝ իր ամէն խաղերով և փուշերովն՝ Ճաշիդ համեմը կ'կազմէ, ընթրիքիդ անուշահամ դինին է։ Եթէ քեզ յուսահատութեան մղէ, վերստին պիտի դարձընէ քեզ 'ի մարտ աւելի եռանդագին։ Ոմ կրնայ պարծիլ յաղթութեան մը վրայ որ ոչ ռազմական արուեստ և ոչ զօրաց զուշաւոր կարգադրութիւն ունեցած է . . . ։ Մարդ պէտք է վստահ լինի որ քաղաքներդը պաշարել կ'արժէ։

Նաղանքը կ'սրէ ախորժակը, պչրանքը զայն կ'եղծէ։ Նաղանքը վարդը պահպանող փուշն է որ հեշտիւ կ'կոտրի երբ մի անգամ քաղուի։ Պչրանքը շամբերու վրայ դանուող գայլին կ'նմանի, որով դժուարաւ կ'բռնուին, և երբ բռնուին, միայն դայլոտ ջրերու մէջ դդուելի են։

Եւ այսպէս՝ իմ աչքս երերուն բոյին սևեռած, իմ երազիս մէջ կը տեսնեմ շողուն էակ մ'որ իմ առջևս կ'պարէ, փալփլուն, շամբուշ ժպիտով, և հրապուրելի շնորհքով զիս կ'խայթէ. իսկ ես կ'խևնամ յուսով և երկիւղով և իմ բոլոր հոգւովս աչքս կ'բանամ, և կ'նայիմ որ իր կերպարանը քիչ քիչ դթով կ'ամրի, երբ ղղայութեան շող մ'իր միտքը կ'համակէ, և հուսկ ուրեմն բարեսէր, ղղայուն և ակնածու դիրք մը կ'բռնէ։ Ահա կ'մօտենայ — պատկառոտ և կասկածելի մերձում մը — և իր այտերուն վրայ ընկած գանդուրներն ետին կ'ձգէ, և իր ձեռքը — մանր սպիտակ ձեռք մը — իմ զօրեղ մատերուս վրայ վեհերոտութեամբ կ'դնէ, և իր գլուխը մէկ կողմը կ'դարձընէ փարելի, և իմ աչքս կ'նայի, երբ ասոնք շարժուն բոյին վրայ յառած են. և իմ մատերս շուտ և խանդագին կ'սեղմեն այդ փոքրիկ ձեռքը՝ դիշերային սրընթաց ամպի մը նման որ Դիանի դունատ ծագը կ'սքօղէ, և իմ աչքս ևս քան զևս կ'մօտենայ անոր կապոյտ, դեղածիծաղ, դթոտ, սիրաբոյր աչացը, և իմ թևս այդ ոտուերային կերպարանը կ'գրկէ, և իմ շուրթս տաք շունչմը կ'շնչէ, որ երթալով աւելի կ'տաքնայ . . . ։

ճիշտ նոյն պահուն սպասուհիս ներս կ'մտնէ, և կրակին վրայ խան մը հանքային ածուխ կ'թափէ, ուստի և իմ շողուն ծովածխային ե-ղաղս կ'աւարտի։

Բ

ՀԱՆՔԱԾՈՒԽ

Բայց այս ածուխը շուտ չվառիր, ուստի փքոցը կ'գործածեմ։ Հնա-գագէտ և բարեբարոյ Քսավիէ տը Մէգրը* սիրուն վէպ մը պիտի յօ-րինէր անտարակոյս երկաթապատ լսթէ փքոցի մը վրայ, բայց ես չեմ կարող։

Փորձ կ'փորձեմ նուազուն և կպրային բոցէն ելնող նկարը վերակո-չել, բայց միթէ կարող եմ երբ իմ աչքս այս սև փքոցին վրայ կ'մնայ։

Ճակատագրին սև վարագոյրն է որ մեր պայծառագոյն երազներու վրայ կ'ընկնի։ Քանի՛ քանի անգամ խնդութեան ցնորքը մեզ կ'պաշա-րեն, մեր առջև ոսկեթև, հրեշտականման, սրտաբորբոք կ'պարեն և Էլիսեան դաշտ մը կ'յօրինեն՝ որու մէջ երաղատես հոգին կ'շողայ և ինքզինքն տարբեր աշխարհ մը վերացած կ'կարծէ, և ասա — յան-կարծ դիշերն կամ ամպ մը — բառ մը, քայլ մը, մտածմունք մը, յի-շատակ մը նոյն ցնորքը կ'վտարեն, վիրաւոր այծի մը պէս որ մուրատի մը թխագոյն հորիզոնին վրայ աներևոյթ կ'լինի։

Ճշմարիտը՝ չգիտեմ եթէ տկարութիւն կամ մեղք է մեր սիրած ցնոր-քը ստեղծել և հոգեկան Եդեմի մը մէջ հաւաքել։ Բայց եթէ մեղք է, անուշ և հմայական մեղք մ'է, եթէ տկարութիւն մ'է, զօրեղ և դրդռիչ տկարութիւն մ'է։ Եթէ այս սիրտը կ'մաշի ամէն կողմէ տե-սած ստութիւններէ, եթէ իր բնատուր զօրութիւնն զեղուն և խորա-զգաց հոգւոյն արժանի առարկայի մը վրայ թափելու կ'փափաքի, մի-թէ մեծ տիտղոս մը չպիտի դտնէ. մանաւանդ՝ վարժութիւն մ'է այս իր նպատակին յարմար, եթէ՝ մրրկի պէս ուժգին, դահավէժ գետակի մը պէս ահաւոր հոսի սիրան երևակայութեան ստեղծած տեսլական էակներու վրայ, զոր մեր գեղեցկութեան, սրբութեան և աշնու

է նաև երկայն ժամեր պայծառ դաշնամնկարներու վրայ նայելու հաճոյքը, եթէ անօգուտ է ղեղուն սրտով և յորդ աչքք Միղէրէրէի պէս երաժշտութեան հիացմամբ մտիկ ընելը, եթէ անօգուտ է հոգիդ խանդով, սիրով և մելրութեամբ բորբոքելու սքանչացումն՝ հանճար ճառագայթող դիրքի մը վրայ։

Իրաւի՝ կան զուեհիկ հոգիներ որ այս բանս չեն զգար, կ'ծիծաղին, կ'այլանեն, մինչև անգամ ցաւիլ կ'կեղծեն։ Նման Ատտիլայի Հունայ որ իրենց թամբերու տակ կ'եփէին հումմիան և կոստաբար կ'ծաղրէին Ապիկոսի հանդամ խնջոյքը։

Ո՛չ, ցնորք հնարելը մեղք չէ, և եթէ մեղք է, այնպիսի յորդառատ, այնպիսի անկեղծ հոգւոյ մը հետ մեղանչել է, որ կարող է այս խնդագին աղաղակել առ Երկին, հաւաստի լինելով որ աղերսը շնորհ պիտի գտնէ, Մեղայ, գթա՛ ինձ։

Բայց կրակս կ'վառի, ախորժելի վառում մը, մեղմ, անայլայլելի լոյս մը կ'սփռէ իմ վերնայարկիս հեռաւորագոյն անկիւնը։ Ո՛րչափ անանման է ծուլածուխս թեթև բոցին — անման՝ իբրև անհաստատ և տարտամ սիրտ մը, զուարթ, ուղիղ և հաստատ սրտի մը մօտ։

Ահա, մտածեցի, տուր ինձ այսպիսի սիրտ մը. սիրտ մ'որ նանրասիրութեան հակամէտ չլինի, զգայութեամբ սաստիկ չբորբոքի, նաղուն կայծեր չարձակէ, թեթևամիտ և շինովի տաքութեամբ անհշան էակ մը չլինի, այլ բայց, պայծառ և զօրաւոր։ Թերևս իր մութ ստուերներն ու անկիւններն ունենայ, վասն զի ո՞ւր է այն հոգին որ մութ գոյն մը չունենայ արիւնը սառ կարող ցաւերու պատճառաւ։ Այլ սակայն կրակը կ'նշողէ, կ'տեսնես զայն ծերպերուն մէջ, և պահ մ'ևս, բոլոր զանգուածը պիտի բորբոքէ։

Այս կրակն աչք կ'առնէ, և հովանեակ մը կ'քաշեմ՝ որ թէև անհարթ, շնորհալի նկարներ ունի։

Ճշմարիտ սիրտը միշտ համեստութեան քօղը կ'կրէ (չէ թէ սուտ պարկեշտութեան, որ սև, անհաճոյ, երկաթեայ հովանեակ մ'է)։ Թոյլ չտար որ զինքը շատ մօտէն դիտեն — կարելի է տոչորէ. բայց քօղին տակէն իսկ տաքութիւնը կ'զգաս, և Համեստութեան ծածկած սիրուն նկարներէն կարող ես տեսնել ոսկենշոյլ ուրուագիծը, և այս նշանով գէթ թէ կ'բորբոքի ու կ'վառի յստակ և կայուն բոցով մը։

Այսպիսի սրտով մը միտքը բնապէս կ'հալի, սուրբ և ջերմ հալում մը. միասին կ'ճգնին իբրև երկուորեակ ծնունդ։ Այսպիսի սրտով մը, ինչպէս Ռաֆայէլ Ադամին կ'ըսէ.

Բանականութեան մէջ
Սէրն ունի իր զահ, եւ է հնարագէտ,

Բայց թող որ զանազանեմ այս սիրոն, քու պաղուկ հոգիէդ — որ ղղաստ է, վասն զի տգէտ է, հնարագէտ, վասն զի չունի թագուն հուրն սանձի կարօտ. պարկեշտիկ, վասն զի փորձող տաք արիւնէ զուրկ է։ Այս կերպ հոգի մը կարող է կենայ հրավառ բովէն անվնաս անցնիլ. ուժեղ է, միայն իր տկարութեամբը, անարատ, վասն զի կը պայթի, և բարի, մի միայն բացասութեամբ։ Թերևս մեղքի և մահուան վրայ յաղթական կանգնի, բայց այս յաղթանակն անբանին յաղթանակն է, որ ոչ կիրք ունի սանձելու, ոչ զօրութիւն հարուածելու և ոչ յոյս մարելու։

Արի՛ դառնանք հաստատ և անկեղծ սրտին, որ իմ հանքային ածուխիս պէս կ'վառի։

Կարծեմ թէ այս սրտին նման մէկ հատ այժմ կ'տեսնեմ։ Աչքը խորունկ է, և մտքին վրայ կ'ցոլանայ. շահադէտ աչք մը չէ, որ քսակդ կշռէ, աշխարհային աչք մը չէ, որ կայութիւնդ քննէ, անբան աչք մը չէ, որ կերպարանդ քննէ, սրտի աչքն է, որ հոգի՛դ կ'կշռէ։

Խոր, փափուկ, ծանր զգացումվ լի աչք մ'է։ Աչք մ'է որ երբ մի անգամ նայիս անոր, կ'փափաքիս որ վերստին տեսնես. աչք մ'է որ երազիդ մէջ պիտի երևի, աչք մ'որ գոյն մը պիտի տայ քու բոլոր անուրջներուդ։ Աչք մ'է այն որ ընդ առաջ, ապագայիդ մէջ կ'փայլի, նաւորդին երկնից վրայ փայլիլող աստղին նման. անով, ակամայ, և հոգեկան վարժութեամբ՝ քու բոլոր դիտողութիւններդ կ'ընես։ Անուշ է և հանդարտ, բայց լի է, իբրև աղբիւր մ'որ յորդութեամբ կը հոսի. Աֆրոտիտէս մը և Մերկուրոս մը, Վոկլուզ մը և Կլիտոմնոս մը։

Դէմքը հրեշտակի դէմք է, փոյթ չէ թէ դեղեցկութեան սրտառուչ գծեր չունի, հոգ չէ՝ եթէ ժողովուրդն զայն չգնաղ չգտներ, փոյթ չէ՝ եթէ կանոնաւոր համեմատութիւն չունի, փոյթ չէ իր գոյնն ու ձևը, դու հոգւոյն նայէ, որ ամէն գիծ կ'լուսաւորէ, ամէն կէտ կ'ղղէ, ամէն մակերևոյթ կ'սրբէ։ Ուղղութիւն, անկեղծութիւն և արժանիք կ'յայտնէ, ճշմարտութիւն և առաքինութիւն կ'բուրէ, և այն նկարն սրտիդ վրայ կ'սեղմես, իբրև քու սիրաբուն երազներուդ անձկալի տեսիլը։

Հասակը կրնայ այսպէս կամ այնպէս լինիլ, կրնայ բարձր կամ կարճ լինիլ, ինչ փոյթ — դու սրտին նայէ։ Թերևս իր խօսքն անուշ կամ

մեղմ, ծանր կամ նուրբ է — աղատ ու պարկեշտ հոգին ամէն ինչ տաք և փափուկ կ'զորձէ։ Մինչդեռ կ'խօսիս, կ'խօսի նա ևս քեզի պէս, մինչդեռ կ'խորհիս, կ'խորհի նա ևս քեզի պէս (չէ թէ ձայնակցութեամբ, այլ զողիակոսին նոյն նշանով) մինչդեռ կ'սիրես, փոխադարձ կ'սիրէ նա։

Քրոջ մը սիրան է այն, և երանի՜ այն մարդուն որ այսպիսի սրտի մը կ'արժանանայ։ Անոր տաքութիւնն ոչ միայն վեհանձն է, այլ սրբանուէր, զուտ, ջերմեռանդ, փափուկ, անձնուէր և երկնասլաց է։

Մարդ մ'առանց տեսակ մը կրօնի շատ շատ ողբրմելի դատապարտ մ'է, բաղդին խաղալիքը, որ ոչ անհունութեան և ոչ ինքնհետ սկսող հրաշալի յատկութեանութեան հետ կապող զոր մ'ունի. բայց առանց կրօնի կին մը յուսադրչ է — անվառ բոց մ'է, անդրոյն ծիածան մը, անհոտ ծաղիկ մը։

Մարդ մը կրնայ իր տնոտի յոյսերն ու յօժարութիւններն երկրային վաղանցուկ իրերու կամ աշխարհի վրայ դնել, բայց կին մ'առանց այն խարսիին որ Հաւատ կ'կոչուի, ալէկոծ նաւ մ'է։ Մարդ մը կրնայ մարդկային սեռի հետ ունեցած յարաբերութեանց շնորհիւ կերպ մը բարոյական պատասխանատուութիւն ստանձնել, բայց կին մը, համեմատաբար իր միայնակ շրջանին մէջ, ուր՝ չէ թէ միտքն այլ զորովն է հսկողութեան շարժառիթը, չէ կարող ուղղութեան հիմ մը գտնել բայց միայն հոգևոր հաւատը։ Մարդ մը կրնայ իր միտքն ու ըղձը ճղմել որ ապաւէն փնտուեն այնպիսի նաւահանգստի մէջ զոր Համբաւն ու Պատիւն իրենց առջև կ'պարզեն, բայց կին մը — ուր կարող է դնել իր յոյսը փոթորիկներու առեն, եթէ ոչ Երկինքը։

Եւ այս անուշ վստահութիւնն, այս համբոյր սէրն, այս համբերատար յոյսն, որ կենայ ամէն մէկ քայլն ու տեսարանն կ'քաղցրացնէ, ախորժելի պայծառութեամբ զանոնք լուսաւորելով, մինչդեռ աշխարհիս փոթորիկներն հրաշունչ թնդանօթներու պէս կ'զոռան — ի՞նչ բան կարող է հայթայթել, եթէ ոչ մրրիկ բարձր և թնդանօթաձիգ բանակէ մ'աւելի զօրաւոր եղող սուրբ կապ մը։ Ո՛վ որ քրիստոնեայ մօր մը խորհուրդներն ու սէրը վայելած է, ամենայն զօրութեամբ պիտի կրկնէ անոր անունն ու պիտի օրհնէ արտասուքով մը — Ե՜ Է՜, կ'աբսպասուէմ։

Իմ կրակս այժմ հրաշէկ ածուխի կոյտ մ'է։ Սենեկիս բոլոր մթնոլորտը տաք է։ Սիրան որ իր փայլովը կարող է խախուտ պատուհաններ, և բեկեալ առաստաղ ունեցող տուն մը տարբերել, ամենէն ընտիր

սէրը կրնայ պարունակել — ընտանեկան սէր։ Աւելի հեռու կ'քաշեմ աթոռս, և հովանեկին վրայ նկարները կ'փոխուին։ Ջերմութիւնը, ժամը, անդորրութիւնն առ անին զգացում մը կ'ղրկոեն, և այս զգացումը, փայլակի պէս սրընթաց, երևակայական աշխարհէն ընտանի էակ մը գողցաւ (Պրոմէթէեան գողօն) որու վրայ իմ խորհուրդներս զմայլելի երազի ձև մը պիտի առնուն։

Ահա վարը, սա կրակին անկիւնը նստած է այս էակը, պարկեշտ այլխիստ սիրուն գոյնով, պարզ ոնային զգեստ մը հագած է։ Կապոյտ ժապաւէնով մը, իր վիզին բոլորտիքը մեծագոյն լար մ'ամփոփուած է, և ժապաւէնին ծայրերն փոսորակ ծնօտին ներքև միանալով կոկիկ կ'կապեն պարզ և անշուք գոհար մը — քու պարգևդ։ Իր թևն — մոմի պէս թափծու սիրուն թև մը — կալնի աթոռին քանդակեալ արմկին վրայ կ'կոթնի. իր ձեռքը սպիտակ ու փափուկ, կ'բռնէ սնական գրքոյկ մ'որ մատերէն կ'կախուի։ Ցոյամատը թերթերուն մէջն է, իսկ միւս մատերն գրքոյկին գորշագոյն ծածկոյթին վրայ կ'երևին։ Իր աչքերի ձայնով երևակայութիւնը գրաւողմը կ'կրկնէ, և դու մոռիկ կ'ընես — կամ անտարակոյս լսել կ'կեղծես — աչունքդ ածելով երբեմն շրթերուն, երբեմն ձակտին, երբեմն մատին վրայ, այն մատն ուր կը շողշողայ աստղի պէս ամուսնութեան մատնին — փոքրիկ ոսկի օղակ մը, որմէ չդանդատիր — և կ'յայտնէ քեզի այն որ քովդ է։

— Տկար նշան մը, եթէ լսկ այս մատնին խօսէր քեզ որ ինք քովդ է։ Աչքը, ձայնը, նոյնաձքը, սիրտն աւելի ազդու կերպով կ'խօսին քեզ որ նէ քովդ է։ Եւ ներքին զգացում մը, որու ուր դանուիլը չգիտես և ուստի գալը չգիտես, սակայն սրտիդ և գլխիդ վրայ կ'հոսի հրանուտ աղբիւրի մը պէս, կ'խօսի քեզի որ դու անոնն ես։ Մէսինճէրի Հորտանսիսային պէս անդառնալի կերպով կապուած —

Ուրիշի կամաց եմ հլու, եւ չկարեմ
Ոչ խօսիլ ոչ գործել առանց իր հրամանին։

Կրակն առաջուան պէս ջերմէ, թ'նչ երկարատև տաքութիւն կայ այս գժուարաւար հանքածուխին մէջ։ Հազիւ թէ կրակարանիս երկրորդ ձողին ինչաւ, թէև եկեղեցւոյ աշտարակին ժամացոյցը տասնմէկը զարկաւ։

Այո, մտածեցի խնդալին, այսպիսի սիրտ մը չնուազիր, ընդունայն կայծերով չսպառիր, տարիներ անցնելով չտոնիր, այլ հետզհետէ այժ և ջերմութիւն կ'ստանայ, մինչև որ կենաց հուրը մահուան մոխրին ներքև ծածկուի։

Խմբագիր—Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ